



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

89199  
mu - 97

112

## БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в  
срок, чтобы и другие  
могли воспользоваться  
ею.

2105



19 NOV 2011

1395-

2070

891.99  
14-97

ԵՐԱՎՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Խ.Վ.

--♦○○♦--

8963

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻ ՀԱԳՐԱԿԱՆԻ

ԴՐԱՄԱԳՈՐԾ

--♦○○♦--

2070



3176

ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
1901

1/1

34945

2659

FROS VOL. 8 1

14 MAY 2013

266

891.99	<u>բարի 5 սպա 41</u>
n-97	<u>Հ ե ր ա մ ա յ ո ւ թ</u>
	<u>շ ա շ ա կ ը</u>

37-2	21/263	
44	<u>27.11.64</u>	



266

41





Թ Բ Ի Մ Ե Ա Ն Հ Ա Յ Ր Ի Կ

8963

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓՈԽՈՒԹԻՒՆՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏ-  
ՐԻԱՐՔ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈԼԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ  
ՀԱՅՈՅ Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

Վեհափառ Հայրիկ :

Մանուկ էի դեռ, երբ վարժարանական ակ-  
դամներուն լրայ, օր մը, Զեր Բարձր Անշխայութեալր  
անցուցած քննուրիսներուն մեկուն մէջ, զիս կը բացա-  
գերիի նույիրելով ինձ Զեր սրբատ ձեռագիրը վեհուն  
անկարին դրօշմած, Զեր «ՄԱՐԴԱՐԻՏ ՍՐԲՈՅԱԹԵԱՆ  
ԵՐԿՆԻՑ » մակարեալ գրբոյլկեն մէկ օրինակ :

Մակարիս զարդերուս իրեւու անենին բան-  
կագինը, մինչեւ այսօր պահած եւ այդ անբարդիս ՄԱՐ-  
ԴԱՐԻՏ : Կեանեցիս մէջ բերես ունեցայ ուրիշ իսկա-  
կան զոհար ու մարզարիսեւ . բայց, զիհետ ինցո՞ւ,  
մարդագայայ հաշտուիլ անոնց նէս, ու մինչեւ վերջը պա-  
հիւ, ա՞րդիօֆ անեն ինչ ծախող ու պատող ժամանակը

եղծեց ու աշխահանկարն մարդիքին տույժ բարուած ,  
ոյնի իսկ այդ ամենին անեղծ կարծած զնուար ու մարդա-  
րիքին փայլն ու գեղը : Զգիտե՛մ :

Տարիներ անցան . բայց Չեր իման նույր բած  
մեծագին ՄԱՐԴԱՐԵՑՆ փայլը մեաց անեղծ , անեւե՞ն .  
ու ես կը պատեմ զայն տախարին ու պիտի պատեմ , ո՞վ  
դիմութիւնն իմ մէտ տն , միջնու գուռական . . . .  
ՀԱՅԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՎԱՐԱՐԱՀԱՅՈՒ ԾԽԱՎԱՆՑ գնանդիմուն .  
կազին . զիտե՞մ . անոր Արայիկ առցելը չեմ անոմիքաւո-  
ռովետեւ Երկենին բարուած է :

Ճանանակի արազընթաց հոսանքին մեց ինչ է  
կեսել մարդուն . մանուրենին մինչեւ երիտասարդուրինն  
բայ և ի միայն :

Ու երբ ես այդ բայլը կ'ընեմ , այսու Հայ  
կանաց հաւատ իմ ճախանձենաձեամբ « ԱՐՏԵՄԻՍ » ա-  
նունով հանդէսիս հրատարակուրեան առրի՛ւ աշ իման կը  
նուիրիք սպազրական նորաձոյլ տառերու հետ մի ուրիշ  
ձեւագիտային դեմ . առոք Խօսավունուրեան այս  
անձիգ ենիւննիւրինը « , ԱՆՌՋՈՂԱՐԱՎԻ ՋԶԱՅԵՎԻ » ,  
ունո՞ Բարեգորիաբայքորման հանձնագուք վեճան կը ընծումին ,  
մեծանոց հզարոցին կը տաւելարմա՛շ սկսեցին հունային յիշեւ-  
ՏՀԱՆՔԻԿԻ ԸՆԴԱՆԱ ԱՅԱՐԱՎԻ » ուն , նույզօք մեջնուն :

Երաւարանի ու Երջաւարդ պրրինտ զիեթա՞՛ Վե-  
ռախան Եկ . երբ Չեր այդ Բառու չեմ իմանաւաս-  
ման վեհ այսու կը խցուիմ տանուին յանձնենքն Եկ  
ՎԵՐՋԱՎԱՌՎԻ ՉՈՅԵՅԲՐ » յաջունուած վանդին Արա-  
քսէնան եւա : Բարեբայդ եմ : այս այսու Վոր անդյու-  
քարան չենքին կարծանանմ ուղղանի իմ սկսեցի յիշեւ-  
տիւննաւ , բայսու ու բարան ։ Ամ հետ յօդը :

ամսունաքնիւր ենի պահեմ մտուն կրնիքոննեմ ուժնոր գրա-  
մեան իշխանագիր , Չեր առաջարձին հնիւնուիք եցրուամենան վեր-  
շարույնեւ ոք մեռցնեցրաւ ու առ գուռն ճվաղասախոյ դժուուուուն :  
Յունական ոք առաջարձուի միւն այսունիք Արինիս պահուածուի :  
« Ադրա՞ւ Յանէկն լուսուց վաճախէ իրծուաչ աջուածակը Փայլը Չեր  
տակարապան էնմատախմայն միջնենուցուեց ունդիմի արքուուուց դաշնու-  
կուրիւնն ունենիրեւու : բուշացած չնեն յինուն կուտիվ ին-  
յարկը Ապշեայ Հուսան Շեն Մաքանիք : վեհախտ Արա-  
կացի անհապիւսակազեաւ Արազածի Ախսինուան վրայ ան-  
քւու յածոյլ մեռ իման Գրաբին Մարշամեակ իրենց սուրբ  
սույնով իցեր ու մրուեր եւ եցերը Երիխովի ամարուն  
վայայ Վրանաու վնիսն Հայ Մահաւացոյն : Հայոց հրեշ-  
տակին թաշուանու ու գույն այդ Ոզին , երեւն միին  
աչերով կը դամին , կը սաւառնի « Մեռելոց դաշըր » , Ար-  
ևսն պաշըր , ուր բայցած պահանիք , դիզայն  
անրազան ուներնիք , յալսանաւած մայրեւու ու ծերեւու  
ողքն , ու մայրակուրոյ ուրեւու աղեխուով ձիըլ կը խը-  
ռովեն ու կարելիր կը խոցն Իր մեծ սիրը : Ու կ'առ-  
նեն Իր բնաւը լաղիսն ուսինեւի կախունուած , օքնին աշ  
կուրայ դառնապին , կը պիղէ արցունիք պահանց բուլացած  
շարերը , ու կորովի կը հնեցնեն յեզր « Արեան դաշի  
խնցեալ » ու յարիտենական հանգսոն հիրիոյ համա-  
ստիւերուն :

« Ա՞ սայր , Օծեալ Ֆեր , ու համուրց հիւսխա-  
կանայ վեհագոյն Աստի սուրբսկն բոցոյ ու պացոյ Չեր  
այդ բողոքի արդար պաղակները հասենին մինչեւ Սևե-  
սիսակայի արոուին առցեւ , եւ Հայոց Հրեշտակը իր փր-  
կարար բաղասանը բերէր , կտաւասով եւրով . կտաւասով եւ ձերով շաղախէր ,

ու զներ Երիբովի մակրուն վրայ վիրաւոր լնկած Հա-  
յու արտին, որու բորբ վերժերը Զեր անձին վրայ մարմ-  
եաւորած, կըսպասէ « առող հայցելորեան » :

Տա՛յր Երկինք, որ ոքիս Ծերութին Ախեօն  
ի Տաճարին, Զեր Ս. Օծուրիւնն եւս « Իջևան Տարին »  
վրայ ոզագուրեր Հայու արիւնն վերածնած առող ու  
կայտառ մանուկն Ազատորիւն » :

Մրտագին երախտագիտուրեամբ առցեալ  
Զերդ Վեհափառ Օծուրեան Մրտագան Աջոյն  
մասչերիլ ի համբոյր,

Մհամ Զերդ Վեհափառ Մրտուրեան  
ամենաերախտագիտ աղախին  
Հրամակիչ  
ՄԱՅԻ ՊէՅԼԻՐԵԱՆ ( ԱՕՆԻ )

2)15 Յունիս 1901

Գահիրկ

**ՎԵՐ ՋԱԼՈՅՑՄԵՐ ԶԱՅՆԵՐ**

ՈՂԲԱՑՈՂ ԶԻՆՈՒՈՐԻ

ՅԻՇԱՏԱԿԵ

ՎԱՅՑԱԽ ՎԱՅՑԱԽ ՎԱՅ

ինձ համար չէ՝ գերեզման,  
Եւ խաչաքարին այն յիշատակ.  
Ո՞հ, մեռանիմ ես ի մահու դաշտ,  
Կորչի անունու անյիշատակ :

Ինձ համար չէ՝ շըքեղ դադաղ,  
Դիաղարդին ունայն պատրանք .  
Ո՞չ բարեկամք յուղարկաւոր,  
Ո՞չ ընտանիք իմ որդուոր :

Ոյլ ինձ համար կայ մի խոր զի՞ն,  
Զոր ես ձեռօքըս վորեցի .  
Հաղար հաղար մեռեալներուն  
Մի գերեզման է հողաբլուր :

Հանէ՛ք անձնէս իմ համազգեստ .  
Առէ՛ք նըշանու և իմ զէնքելս .  
Թողէ՛ք բաժին ինձի միայն  
իմ արիւնոտ շապիկ պատահ :

Զինուսրի դին չունի պատիւ,  
Յոսից քարշեալ ձրգեն ի վիճ,  
Որպէս խրծունք ի կալոցին  
Դիգեալ կուտեն ի բարկոցին :

Մահու գաշտէն ուղեսրեալ  
Հասինք ահա մեր հանդիստ .  
Հանդշեցէ՛ք արդ քոն անխրառով,  
Սրեան գաշտի խոնչեալ զինուսրիք :

Այլ մինչ հնչէ Գարբիէլի փող,  
Եարժի՛ յայնժամ մեր հողաբլուր ,  
Եւ մեք յառնեմք ի կեանըս նոր ,  
Որպէս արծուի նորափետուր :

Գոյ Քրիստոս Տէր գատառոր ,  
Գահերն ամեն կոչին յատեան .  
Արդար Աստված չահնէ՛ անուեն  
Աշեան գաշտ՛ մեծ գատաստան :

Աղջա՛մի մնասնիք , գուք , ողջ զինուսրիք ,  
Կըսակ թողում ձեզ յետ մահուս .  
Ես սուր առի սրբով անկայ  
Յուշ առնեմ ձեզ Քրիստոսի բան :

Աստուած ըստեզմ զմարդ հողակործ ,  
Գաշաի մըշակ աշխատաւոր ,  
Անէ՛ծ ձք ձեռին տին չարարուեստ ,  
Որ զմարդն արար արիւնագործ :

Ասեն մարգիկ աշխարհաբան .  
—Գոյ ժամանակ մեզ ուկեցար ,  
Գահերն ամեն գան ի համբայիր ,  
Աւխտեն զնել սուրն ի պատեան .

Առիւծ՝ գառնայ հեզ , անմըստնչ ,  
Գայլ՝ ընդ գառին շրջին յարօտ ,  
Արեան գաշտեր ծագկին շուշան ,  
Խաղաղութիւն տիրէ աշխարհ : —

Այդ երա՛զէ , չե՛մ հաւատար .  
Ես միտ ըերեմ Քրիստոսի բան .  
Յարիցեն ազգ ազգի վերայ ,  
Աշխարհ գառնայ մի ծով արեան :

Յիսուս, Փրկիչ խաղաղաբար,  
Եկար տեսար Դու մեր աշխարհ,  
Մարդիկ խեռ են և խօլամիտ,  
Դեռ ես չտոսան Աւետարանդ :

Ո՞վ մարմնացեալ սիրոյ հրեշտակ,  
Դու կոչեցիր զմարդիկ եղբայր .  
Տուր մեղ ըզքոյց խաղաղութիւն,  
Դոր չկարէ տալ մեղ աշխարհ :

— ստուգ —

## ՈՂԲԱՑԵԱԼ

## ԶԱՆՇԵՒԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հրեշտակ հոգիս իմ վերացոյ ,  
Տարաւ իջոց մեռելոց դաշտ .  
Ուր է , գիտէք մեռելոց դաշտ .  
Ի բարելո՞ն թէ Հայաստան ,  
Հայաստա՞ն է , Հայաստա՞ն ,  
Հայոց աշխարհ և Հայրենիք ,  
Ուր զոհուեցան անմեղ անպարտ  
Հայ զառակներ բիւր բիւր հաղար :  
Ես շուրջ եկայ մեռելոց դաշտ ,  
Հոգիս պատեց զարհուրանք .  
Դաշտին երես լեցուած էր ողջ  
Մարդոց ցամքած սոկերատօք :

Ասի' . աւազ , սոկերք հոյաց ,  
Դուք տի տեսնաք խաչէն յիտոյ  
Այն հրաշալի յարութեան օր :

Տեսայ մի տեղ քարտկարկառ ,  
Կոյս մի նստած վէրէն կուլար .  
Գերեզման էր քարտկարկառ ,  
Ո՛չ գիր ունէր , ո՛չ խաչաքար :

Ասի՞ . ա՛զիկ , ինչո՞ւ կուլաս ,  
Ի՞նչ է անունդ , ուստի՞ ևս դու ,  
Քաղքըցի՞ ևս , թէ գիւղացի՞ ,  
Ի՞նչ բան ունիս մեռելոց դաշտ :

Ասաց . — « Սօնէ՞ է իմ անուն ,  
Ես չգիտեմ քաղաքն ինչ է .  
Ես գիւղացի՞ եմ գիւղացի՞ .  
Մըշոյ դաշտի Խորհոյ գիւղէն ,  
Լու այս դաշտին մէջ ծընած եմ ,  
Մեր Եփրատայ գետին եզերք ,  
Ինչպէս պատմեր է ինձ մայրիկս  
Չեմ մոռացել ես , կը յիշեմ .  
Նա մինչ կերթար ոչխարին կիթ ,  
Յան ու երկոնք բաներ է զինք ,  
Եւ համելով Եփրատին տփ  
Զիս ծներ է ողջամբ աղջիկ .  
Սուրբ Եփրատին ջրառվ լուացեր ,  
Ո՛չ , չունելով խանձարուրիկ  
Կակու կանաչ խոտով ծրաբեր

Եւ տուրիկին \* ) մէջն է դըրեց ,  
Կաթի սավորն հետ տուրիկին  
Ուսին առած գեղն է դարձեր .  
Ես գիւղացի՞ եմ , գիւղացի՞ ,  
Զարքաշ աղջիկ եմ գիւղացի .  
Դու առում ես , ինչո՞ւ կուլաս .  
Ես որբ մնացի ապա չի լո՛մ : » —  
Ասի՞ . Սօնէ , խօսի՞ր գուլինձյաւերուդ ճառ ,  
Գուցէ դանեմ ես քեզ մի ճար :  
— « Յաւըս մեծ է , լեռներու շափ ,  
Գուլ չկարես գանել մի ճար .  
Հէրիկս այստեղ ըսպանեցին ,  
Այս քարերուս մէջ ծածկեցին .  
Մէրիկս առան տարան գերի ,  
Ո՛չ , իմ մէրիկ , անուշ մէրիկ ,  
Սօնէն թողիր որբ ու մենիկ : » —  
Ասի՞ . Սօնէ , չունի՞ս քուրիկ ,  
Որ մենութեանդ բնիեր լինի ,  
Եւ վշտերուկ քա վշտակից :  
— « Ո՛չ իմ քուրիկ , Եազլու քուրիկ ,  
Որ նշանուած էր Մուշեղին ,

\* ) Տուրիկ՝ կը հշամակի մախադ մշեցոց բառ :

Էն էլ հետ մօր զընաց դեղի ,  
Որ քրթի տան նա հարս լինի :  
Լըսեց Մուշեղ քաջ մըշեցին ,  
Հեծաւ արագ իւր նըժոյդ ձին .  
Ասաց . կ'երթամ ես ի կըռիւ ,  
Կամ կ'աղատեմ գերի նաղլուն ,  
Կամ կը մեռնիմ նորտ սիրոյն : » —  
Ասի , Սօնէ , չունի՞ս ախտէր  
Քո վերջի յոյս և ապաւէն :  
Ասաց . « Ունիմ ես մի ախտէր .  
Կարիճ ֆրան հայրենասէր .  
Նա պաժ \* ) ունէր սօսի նըման ,  
Ուսէն կախէր թուրն ու վահան ,  
Ա՛ն նա թողեց հայրենի տուն ,  
Գրնաց օտար երկիր պահուխատ ,  
Ո՛չ թուղթ ունիմ , ո՛չ բարի լուր ,  
Զգիտեմ ո՞ւր է , մեռաւ թէ ողջ : » —  
Ասի . Սօնէ , անբա՛զգ Սօնէ ,  
Աշխրհիս վէրէն էլ տէր չունի՞ս :  
Ասաց . « Աստուած է , և Զանչե ,  
Որ որբերուս նա հայր լինի : » —

\* ) Պաժ՝ կը հշամակէ հասալ :

Ասի . Զանչե դու ճանաչե՞ս :  
Ասաց . « Միայն անուն լսեմ ,  
Ես որդեգիր եմ Զանչեին ,  
Աշկերտ նորս որբանոցին : » —  
Ասի . Սօնէ , ես լուր ունիմ ,  
Լուրըս վաշտ է , չկարեմ խօսիլ ,  
Գումար լինել խեղճ ողբեկիդ ,  
Եւ վրդովիլ մատաղ հոգիդ :  
— « Խօսի՛ր . բա՛նբեր . դու մի՛ պահեր ,  
Ե՛ս էլ երազ վատ եմ տեսեր .  
Ասաւած բարին գարձրնէ ,  
Զեմ վրդովիլ ու խռովիր .  
Ես վարժած եմ ցաւեր տանիլ .  
Պատմեցի քեզ , միթէ մառցա՞ր  
Ինչե՛ր անցան իմ սկ գլխէս ,  
Զկարեմ խոյս տալ ճակատագրէս : » —  
Ասի . Սօնէ , ո՛չ և աւա՛լ ...  
Նոր գուժ հնչեց Մոսքուայէն .  
— Մեռաւ Զանչեւ եւ բաղեցին :  
Պարծող Սօնէն լսեց այս գուժ ...  
Շատ տատանուեց , կահացի՛ ոյժ .  
Պահ մի մնաց նա լուռ ու մոնջ ,  
Ինչպէս արձան որ չի խօսում .  
Խաժ ոչքերուն զոյդ ակներէն

Հոսեց թափեց ազի արտառւնք ,  
Լելուն բացուաւ , ձայն արձակեց .  
— « Ա՞հ , ի՞մ Զանշեւ , մի՛թէ մեռար ,  
Ո՞չ . անունդ է անմահ յաւէտ .  
Հայր և մայր իմ թողին զիս որբ ,  
Եւ գոււ թողիր Սօնէին քո որբ : » —  
Յոյսը հասաւ Սօնէին յօդն ,  
Սօնէին դարձաւ լուրջ և լողօն .  
Մըրեց աշեր դարձուց ի վեր  
Դեպի երկնուց կապոյտ վրբան ,  
Կեցցէ՛ , դոչեց , ՅՈՅՅՈ ու ՀՈԽՈՅ .  
Մեռաւ Զանշեւ մահկանացուն .  
Աղջ ես Դու , ո՞վ երկնառոր Հայր .  
Սոսուա՛ծ գըթած և բարեւար ,  
Որ կը հոգաս ճնճըզուկներ ,  
Դու չե՛ս մոռնար քո խեզճ որբեր :  
Ասի . Սօնէ , ես աի դառնամ ,  
Հայսց դաշտի ծաղկիներէն  
Քաղէ՛ , կապէ՛ մի ծաղկեվունջ  
Տուր որ տանիսմ քո Զանշեւի  
Գերեզմանին պըսակ զընեմ :  
Ասաց . « Դիտե՞ս դու շուրջ եկար ,  
Մեռելոց դաշտ ծաղիկ չունի .  
Խորշակ փրչեց հարս կուռէն ,

Խամբեց թափեց բոյսն ու ծաղիկ .  
Եմ վարսերէս վասնջ մի հանեմ ,  
Ոլորելով պըսակ հիւսեմ ,  
Թաց աշքերուս ցօղով թրջեմ .  
Տա՛ր Զանշեւի անմահ շիրմին .  
Ո՛յս է միայն սուրբ յիշատակ  
Եւր ողբայեալ հէդ Սօնէին : » —  
Հարցուց Սօնէն . « Ո՞վ էր Զանշեւ ,  
Պատմէ գու ինձ նըկարագիր : » —  
Ասի՛ . Զանշեւ վորքիկ մարդ էր ,  
Հասակ՝ կարծիկ , ուսեր՝ կուզիկ ,  
Հոդին՝ բարի , սիրտն էր ազնիւ .  
Եր ուսումն էր իրաւաբան ,  
Միշտ չատագով ձշմարտովեան .  
Բարի խորհուրդ տալ պատրաստ էր ,  
Ով որ լինէր նա չէր ինայիր .  
Գըրի մըշակ էր մեր Զանշեւ ,  
Տիւ ու գիշեր անխոնջ արքնէր ,  
Թափէր աշքէն լոյսն ի թղթին .  
Թուղթըն լինէր փող ու ոսկի ,  
Ասկին փոխէր հաց ու սընտենդ ,  
Ճարտակ լինէր իւր որբերուն : » —  
Ասաց Սօնէն . « Ավաստ , ավաստ ,

Պէտք էր ջանշե , որ շա՞տ ապրէր .  
 Մեզ որբերուս խընամ՝ տանէր ,  
 Աստոծոյ կամֆ օրհմեաշլ լինի :»  
 Ասի . Սօ՞նէ , ողջամբ մընաս ,  
 Յոյսն ու Հաւատ ըզքեզ պահեն ,  
 Հերի՛ք ողբաս , լսս ու կոծես ,  
 Թո՞ւզ գերեզման քարակարկաս ,  
 Թո՞ւզ մեսելոց դաշտի ողբեր ,  
 Կանցի՛ ձըմես , կուգայ դարուն ,  
 Մեռելոց դաշտ ծաղկազարդի ,  
 Անջատ , անջատ սովերոտիք  
 Շարժին հրաշիւք , կըցին իրար ,  
 Շունչ մի շնչէ կենդանարար ,  
 Յառնի կոնդնէ մեռելոց դաշտ .  
 Սօ՞նէ , չմեռնիս , աղրի՛ս անջափ  
 Մինչև հասնիս հարսնութեան օր ,  
 Ո՞ւ տայր և ես ողջ մընայի ,  
 Քո հարսնութեան երդ երգէի ,  
 Մինչ վերածնին հայոց որդիք ,  
 Եւ Հայաստան յառնէ վառօք ,  
 Օրհնեալ է օրն այն յարութեան .  
 Ասաց հրեշտակ իմ առաջնորդ ,  
 Ե՞ս եմ զուարթուն աւետաւոր ,  
 Ե՞ս ամի հնչեմ յարութեան փող .

Ասաց այս բան և վերացաւ :  
 Ասի՛ . հրե՛շտակ , զիս ո՞ւր թողուս ,  
 Ա՞ռ տա՛ր դու զիս ուստի բերիր :  
 Ասաց . « Կա՞ց դու մեռելոց դաշտ ,  
 Սպասէ՛ աւուր հայց ելութեան : »  
 Ասի՛ . հրե՛շտակ , ո՞հ , մինչև յե՞րբ  
 Նստիմ ու լամ ողբանուէր :  
 Ասաց . մինչև աեսնաս Աղեղն  
 Նոյեան նըշան և ծխածան  
 Կամար կապած երկնուց երես  
 Մի ծայր Մասիս , միւսն Արագած .  
 Եւ Եսային հնչէ պատգամ .  
 Այսպէս ասէ Տէր զօրութեանց .  
 Այլես հաշտեալ եմ ես ընդ քեզ  
 Ո՞վ տառապեալըդ Հայաստան :  
 Որ զայս հիւսեց և ողբագրեց ,  
 Ու ճդին ելաց ՀՈՅԹԻԿ ՀՈՅԹԻԿ .

— Պ Օ Բ —

## ԻՍԱՀԱԿՅԱՅ ԶԵՆՈԽՄՆ

« Որ զ փերկան յու օր  
Ահարաս պատարագիդ զենումն  
Տանելրացաւ Արքանաւ և և անել,  
Ետեւ Ասանկաւ եւ ցնծացաւ: »

ՃԵՌՇԱԼԻ

Հաւախօսի վերջին պահան  
Երբ Արքահամ վրանայտկին  
Ներքեւ հանդիսու ննջէր և քուն .  
Խիզճըն մաքուր , սիրտն անխրոսով ,  
Չէր վրդովէր նորա քուն :  
Չայն մի կանչեց , ձայն հաւուն չէր .  
Չայն երկնային հրեշտակին էր.  
Արքահամ , Արքահամ :  
Չարթեւ իսկրին մեծ նահապետ .  
Ահաւասիկ պատրաստ եմ , ՏԵՇ :

Ա՛ռ սիրելի որդիկ Սահակ ,  
Տա՛ր Սաղիմայ բարձանց վերայ ,  
Հա՛ն ողջակէղ Տեառն Աստուծոյ ,  
Զոր դու պաշտես և հաւատաս :  
ՏԵՇ . քո հրաման միշտ օրհնեալ է .  
Դու ինձ տուիր Սահակ որդիս ,  
Իսկ այժմ յինէն առնել կամիս .  
Օրհնեալ ես դու , օրհնեալ քո կամք .  
ԹէՇ Աբրահամ և թէ Սահակ  
Քոյդ են , ո՞վ ՏԵՇ , ինչպէս կամիս .  
Զի քո սուրբ կամք բարի է միշտ :  
ՏԵՇ , Դու զիտես , ես չեմ մոռնար ,  
Ես յուշ բերեմ քո այն խօստումն ,  
Թէ աշխարհիս աղդ և աղինք ,  
Պիտի օրհնին իմ զաւակովս ,  
Այնչափ ածին ու բաղմանան ,  
Ինչպէս աւազ ծովափերուն ,  
Եւ կամ երկնուց ասազերուն չափ :  
Ասաց ինքնին Հայր Աբրահամ .  
Բարի Աստուծ զոր ես պաշտեմ  
Չառնէ չուշ ինչ իւր ծառային :  
Խորհուրդ է այս զոր չգիտեմ :  
Աստուծոյ բանէ է , ո՞վ զիտէ :  
Ես ծառայ եմ հոգ ու մսխիր ,

Տերոջ հրաման պէտք է լլսեմ։  
 Պըժաւ մի բան կայ իմ առաջ,  
 Ի՞նչպէս ծածկեմ բան Սառայէն։  
 Հապա եթէ լոէ Սառան,  
 Միթէ թողո՞ւ մայրենի դուխ  
 Ողջակեզել միակ որդին։  
 Եա իսմայէլ արմէն հանեց,  
 Որ իմ Սահակ ժառանդ լինի։  
 Հաղար անգամ աղաչեցի  
 Զրկանք չանել խեղճ Հաքարին։  
 Ես զարմացայ երբ Տէր Ասուտած,  
 Հաւանեցաւ կընոջ խելքին,  
 Ենձ հրամայեց որ հետեիմ։  
 Չէ՞ չեմ ասեր ես Սառային։  
 Ես ափ պահեմ այս բան դաշտին։  
 Այլ ինձ ի՞նչ փոյթ քննել այս բան,  
 Խախտել հաւատ իմ աներկլապայ,  
 Կամ վարանիլ տարսուբերիլ։  
 Միթէ ես ծառ եմ հաղմավար,  
 Եւ կամ մի մարդ թերահաւատ։  
 Թէ պակասի Սահակ որդիս,  
 Մհամ անժառանդ և անորդի,  
 Միթէ չկարէ՞ Տէրն իմ կարող  
 Ժես քարերէն հանել որդիս

Իւր ծառային Աբրահամու ,  
 Ամուլ պաւաւ էր Սառայ կինս .  
 Ինչպէս ծընաւ նա աւետեօք  
 Իմ անգրանիկ Սահակ որդիս ,  
 Չկարէ՞ միթէ կրկին Տեսնիլ .  
 Մի այլ Սահակ նոր աւետեօք ։  
 Ասաց այս բան հայր Աբրահամ ,  
 Կապեց գօտին , պնդեց հաւատ ,  
 Առաւոտու արշալոյսին  
 Փայտ կոստրեց բարձեց իշուն ,  
 Ենքն և Սահակ երկու ծառայք  
 Կազմ և պատրաստ ելան ճամբայ :  
 Գնացին , գնացին մինչ երեք օր .  
 Հայր Աբրահամ դիտեց հեռուստ ,  
 Եա նշմարեց լերան բարձունք ,  
 Աւր լուսատիպ հրեշտակ մի կար .  
 Ողջակեզին սուրբ տեղն էր այն .  
 Կացէ՞ք , տաց իւր ծառայից ,  
 Ապասեցէ՞ք մինչեւ գտունամ :  
 Ես և որդեակն իմ իստհակ ,  
 Երժամք տեղին այն սրբավայր ,  
 Երկրպագ եմք Տեսոն Ասուտծոյ :  
 Հայր Աբրահամ էշը թողուց ,  
 Փայտեր բարձեց Սահակին ունի .



Երշանիկ էշն Աբովյանու .  
Կըսրդ եղաւ Խաչի գործին ,  
Ինչպէս Սիմօն Կիւրենացին :  
Մինչ երթային հարցուց Սահակ .  
Հայր , ահա՛ հուր և ահա փայտ ,  
Ուր է ոչխար մեր ողջակէղ :  
Պատասխանեց հայր Աբրահամ .  
Դու մի՛ հսդար , որդեա՛կ իմ , այդ .  
Թողլունք Աստուած թող պատրաստէ  
Իւր ողջակէղ և պատրաստ .  
Ասաց Սահակ . ի՞նչ բան է այդ ,  
Ո՞վ է լրսեր , ո՞վ է տեսեր ,  
Որ ինըն Աստուած իւր ողջակէղ  
Ինքն հսդայ և պատրաստէ ,  
Հապա ի՞նչ է մարդոյն նուէր ,  
Լամ պատաշող ընծայաբեր :  
Մեք աղքատ եմք և չըքաւո՞ր .  
Աստուած օրհնել է մեր տուն ,  
Հազար հազար ռշխար ունիմք  
Մեք իդաշտին արօտական ,  
Միթէ ինայի՞լ մի պարարտ իսոյ  
Աղջակիցել Տետն Աստուածոյ :  
Այլ մինչ հասին այն սուրբ տեղին ,  
Հայր Աբրահամ չկարաց պահել ,



Պատմեց սրգւոյի իւր Սահակայ  
Ետծ կեալ խորհուրդ ողջակիցին :  
Ասաց . որդեա՛կ իմ , Տէր Աստուած ,  
Զոր ես պաշտեմ լի հաւատով ,  
Նա հրամայեց իւր ծառային ,  
Ար սուրբ Լեբանոս բարձանց վրայ  
Զքեղ ողջակէղ հանեմ նըմա :  
Ասաց Սահակ . գու ի՞նչ ասիր .  
—Ասի . պատրաստ եմ , աւասի՛կ :  
—Ե՛ս էլ , ով հայր , նոյն ասեմ քեղ ,  
Ու . աւասիկ պատրաստ եմ ես :  
Արչա՛փ ուշախ լինիմ , ո՞վ հայր ,  
Թէ ընդունի զոհն իմ Աստուած :  
Ապրի՛ս . որդեա՛կ իմ դու հնագանդ ,  
Զոհի փայտեր առեղ վա՛ր տու .  
Եինեմք ուղան փայտեր վէրէն :  
Ժամանակ է ահա , թոյլ տուր , որդեա՛կ  
Կապեմ սաներդ և քո ձեռներդ ,  
Որ չը շարժիս ու խըլլափիս ,  
Արին ցարտէ իմ հանդերձիս :  
Հայրիկ , քըտեմ , զիս մի՛ կապեր ,  
Հագւով սրանի խսնարհ եմ ես .  
Միթէ չունիմ ես քո հաւատ .  
Զի քո որդին եմ հարազատ :

Թիւյլ սուր ինքնին ես կամովին  
 Զիս տարածեմ սեղնի վէրէն ,  
 Թեւերս պարզեմ խաչանըման  
 Այնպէս մնամ անշարժ հանդարտ ,  
 Ինչպէս դառնուկ մի անմըռունէ ,  
 Դու կատարէ զոհին սուրբ դորձ :  
 Զէ՛, որդեա՛կ իմ, թո՛ղ տուր, կապե՞մ .  
 Աապանքն ալ իր խորհուրդն ունի :  
 Ասաց Սահակ . հնագանդ եմ, հա՛յր ,  
 Արա՛, ինչպէս Ասոււած և դու .  
 Գիտէք ձեր բան և ձեր խորհուրդ :  
 Երկինք գետին , դուք լուռ կացէք ,  
 Եւ դիտեցէք զոհիս հանդէս :  
 Հայր Աբրահամ մինչ պատրաստ էր  
 Զոհին սուշը դործ փոյթ կատարել ,  
 Վերէն երինից բարձրութենէն  
 Դիտեց Ասոււածն Աբրահամու ,  
 Ասաց Արդւոյն իւր Միածնին .  
 Արի՛ իջնամք երաւսազէմ ,  
 Վեր սաղերան նստեալ նայիմք ,  
 Աիօնի լեռան բարձանց վէրէն  
 Ես ցոյց տամ քեզ նախատօնսակ  
 Քո հանդ երձե ալ Խաչի տօնին :  
 Հանդ իստահան է Աբրահամ ,

Պատարագիչ և քահանայ .  
 Ո՛վ է օրհներ զինք քահանայ .  
 —Մելքիսէդեկն է օրհներ :  
 Տե՛ս դու , ո՛րդեակ , աւսի՛ր այժ Աէն ,  
 Խաչիդ նըկարն է Խառհակ :  
 Արդին տեսաւ սիրտ դորովեց ,  
 Սահակ կապած սեղնի վէրէն  
 Վիզին պարզած և ուլն ի ձիգ  
 Այնպէս պատրաստ էր խեղճ դասնիկ .  
 Աշկունք ոզմամ հայէր ի վեր ,  
 Որ իբր անխօս ազերս ածէր .  
 Ո՛վ Միածն Արդի քո Հօր ,  
 Ես էլ իմ հօր միածնն եմ ,  
 Դու բարեխօս եղիր առ Հայրդ :  
 Ահա հայրն իմ սուր վերացեր ,  
 Ասէ՛ . Ասոււած է Հրամայէր ,  
 Ջքել տի զենում ես սզշակէզ :  
 Արտառուչ բան Խառհակին  
 Շարժեց ի դութ Արտոյ սրդին ,  
 Մատեաւ խկոյն ազերս մասսաց .  
 Հայր իմ քո կամք միշտ արդար է .  
 Եւ քո վրձիոն անդարձ է .  
 Խաչի վրձարն իմ պարտիքն է .  
 Դու գիտես , Հայր , և ես գիտեմ ,

Խառնելայ ողջակիզումն  
Զկարէ փրկել աչխարհ ողջոյն ։  
Խեղծ է միակ Սահակ որդին ,  
Զօր աւետեօք ծընսւ իւր մայր ։  
Հայր Աբրահամ խաղ ըրդիտէ .  
Մենք վորձ արինք նա կըստուդէ ,  
Եւ ցոյց տոյ մեղ իւր մեծ հաւատ ։  
Հրաման տուր , Հայր , իջնոմ արտգ ,  
Եւ աղասեմ գառնուկ Սահակ ։

Գիտեմ , որդեա'կ , սէրդ անհաւնէ ,  
Աբրահամին գու առ մարդիկ ,  
Գընա' , փրկել զենման սըրէն  
Քո նախատիպ այն խառնեկ ,  
Զի քո անոն վաղ կնքած եմ ,  
Քու Փրկիչ ես աղդի մարդկան ։

Բայց գիտե՛ս գու մեր Աբրահամ  
Առանց զո՞հի չկտրէ մնալ ,  
Առու ած աղաշտ հոգի նորս  
Գուցէ խսովի և սիրտ մընայ ,  
Թէ Տէր Աստուած չընդունեց զո՞հս ։  
Ես հրեշտակին պատուէր տուի  
Ար երինային մեր հօտերէն  
Մի պարաբու խոյ և անարստ  
Առու բերէ Սիօնի բարձունք ,

Եւ Ատքեկայ ծառէն կախէ ։  
Դու ցոյց տուր ոյդ Աբրահամու ,  
Թող Սահակայ վախան զենէ ։  
Գիտե՞ս , ո՞րդեակ , Սարեկայ խոյն ,  
Ար կախուած է եղջիւրներէն ,  
Այդ ոլ իւր մեծ խորհուրդն անիւ ։  
Ժանու որդիներ Խարայէլի ,  
Արաց համոր էր քո սուրբ կեանք ,  
Պիտի կախեն կեանքդ ի վայտէն  
Ինչպէս խոյիկն այն եղջիւրէն .  
Պիտի աւեսնան իրենց աչքով  
Որդիքըն չար և ապիլատ ,  
Զօր գուշակեց ծառայն Մովսէս ։  
Սարեկայ ծառն և կախեալ խոյն  
Մի այլ նըլար է քո խաչին ։  
Իշեր այժմիկ Փրկիչ որդեակ ,  
Քեզ ըսպասէ կաղաքալ Սահակ ։

Էջ ի Հօրէն Փրկիչ Արդին  
Լոյս ծառալեց Սիօնի սուրբ լեռ ,  
Լուսոյն մէջէն ձայն մի հնչեց .  
Զոյն արարիչ Փրկիչին էր .  
Շըտեցաւ յոյժ հայր Աբրահամ  
Սուրն ի ձեռին գող առեց ։  
Է՛ , Աբրահամ , Աբրահամ

Դարձու քո սուր պատահեկէդ ,  
Բաւ է այդշափ , փորձ լըրացաւ .  
Ես գիտէի և գիտացի  
Թէ երկիւղած ես Աստուծոյ :  
Դու վեր նայիր , ո՞վ Աբրահամ ,  
Տէ՛ս Սարեկայ ծառի ճղլէն  
Խոյ մի կախուած եղջիւրներէն ,  
Ա՛ս դու զենէ այդ ողջակէվ  
Քոյդ Սահակայ վոխանէ այն .  
Տէր քեզ բաշխեց Սահակ սրգիդ  
Մեծ հաւատոյդ չնորհն է և դին :  
Երբ Աբրահամ անակընկալ  
Տեսաւ այս բան և զարմացաւ ,  
Հոգին ցնծաց , սկրտ՝ հրճուեցաւ .  
Անպատում էր իւր ցնծութիւն  
Եւ ո՞վ կարէ ծառել զայն :  
Իսկոյն արձկեց կապեալ Սահակ ,  
Սահակն ելաւ կանգնեց ողջամի  
Ողջագուրեց զինքն Աբրահամ :  
Ասաց : ո՞րդեակ , չասի՛ ես քեզ ,  
Տեսամ ինչպէս Տէր պատրաստեց  
Իւր ողջակէվ և պատարագ :  
Աւատի՛ էր խոյն ի Սարեկայ .  
Ո՞վ էր կախեր ծառէն ի վայր :

Արդեօք երկնո՞ւց ըերաւ հրեշտակ .  
Չէ՛, նորաստեղծ մի խոյ է նա ,  
Մեր խոյերուն չէ նա նըման ,  
Եղջիւրիկներն են խաչածեւ ,  
Եւ ծայրերէն արիւն կաթէ ,  
Գեղմին կարմիր , բոսրագոյն ,  
Աչկունք ողօրմ նայէր նուազ :  
Հեզ է այս խոյն , կոտ չէ պիտոյ ,  
Տէ՛ս ինչպէս կայ չհանէ մըռունչ :  
Բահէ սուրէն և ես գլխէն ,  
Պարզենք այնպէս սեղնի վէրէն ,  
Ես կը զենեմ , դու վայտ վառէ .  
Աղջակիղեմք երկնից պարգև ,  
Ար աղատեց քո կեանք մահէն :  
Ասաց Սահակ . օրհնեա՛լ Աստուծած ,  
Օրհնեա՛լ իւր ձեռք , որ շուտ հասաւ .  
Թէ չհամեր այդ օրհնեալ ձեռք ,  
Վաղուց քո սուր զիս զենում էր :  
Եւ դու ինչպէս գառնայիր տուն ,  
Հարցնէր Սառան ծընող մայրիկա  
Ի՞նչ պատասխան ողիտէ տայիր :  
Իրա՛ւ է արդ , սրդեա՛կ Սահակ  
Պատուէր տամ քեզ դու պահէ կայն .  
Առային՝ մօրդ մի՛ յայտներ ըսն .

Դու լու գիտես քա մօյ բնաշթիւն ,  
Ցառկոս , խսժոս կին է Առանի .  
Պատմեմ , ո՞րդեակ , քեզ անցեալ բան ,  
Երեք հրեշտակը մեղ հիւր եկան .  
Ինձ աւետիս տուին ուրախ .  
Ասին , Սառայ կըն քս պառաւ  
Քեզ ափ ծընի մի նոր զաւակ :  
Սառան լրսեց վրանին ետե ,  
Եփաղեցաւ թերահաւատ :

Լքսի՞ր , ո՞րդեակ , ուսիր այս գառ ,  
Ինչ որ մարդոց անհընար է .  
Ասոււծոյ մօտ հնարաւոր է :

Այսպէս ահա հայր Աբրահամ ,  
Իւր Սահակայ ողջակիզով  
Խաչին խարհուրդ ճիշտ նըկարեց  
Իսկապէս և գործնապէս :  
Այլ մարդարէք միայն բանիւ  
Գուշակեցին խաչին խորհուրդ  
Խոկ Աբրահամ հանեց ի ցոյց  
Խաչին պատկեր և տեսարան .  
Որչա՞փ նըման և խիկատիս  
Մարդ հիանայ հայելն ի նոտ :

Ար խանդակաթ եմ առ ի սէք  
Խաչի ճառին և Խաչելոյն .

Ես հայեցայ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԻԿ ,  
Բան բառեղջի՛ նգարձակեցի .  
Խասհակի զենման խարհուրդ  
Սուրբ Ծնորհալին Ծաբակնոցին  
Զորս առզերով բովանդակէ .  
Զոր նուիրեմ այն հայրեցուն  
Բարի պրասով զաւակներուն ,  
Ար հաւատով պրիացած  
Կոչին որդիք Աբրահամու :

Այլ ոչ նըման Հըրէկից ոլէս ,  
Որք պարծէին և պանծային ,  
Մեք որդիք եմք Աբրահամու  
Զոր կշտամբէր Փրկիւ Յիսուս :

Այլ ճշմարիտ որդիք լինիլ ,  
Գործել բզգործն Աբրահամու .  
Զի սոսկ հաւատ շաւի արդիւնք ,  
Եւ համարի մեռել անշունչ .  
Գործ միացած հաւատոյն հետ  
Կենդանանայ հաւատն անշունչ .  
Երանի՛ որ ունի զհաւատն ,  
Բարի գործով իւր պրակեալ :

Ո՞վ գու Ասուււած Աբրահամու ,  
Գու մի՛ հաներ յինէն զհաւատ .  
Մինչեւ երթամ ի գերեզման ,

Եւ չեն պիսոյ ինձ անդ հաւատ .  
 Այլ գէմ առ գէմ ուրբ տեսութեանդ ,  
 Սբառահամու գողն ընդարձակ ,  
 Դաղարսոսին մօտ բրնակիմ :  
 Զի սիրեցի քո աղքաներ ,  
 Եւ քո սիրոծ այն փոքրիկներ ,  
 Մեր աշխարհի աշարդուածներ ,  
 Զարս գու փոխան քեզ համարիս ,  
 Ո՞վ Յիսուսի գուք փոքրիկներ ,  
 Միջնորդ կացէք առ Տէրքի մեր .  
 Ես ալ ձեզ հետ ի միասին  
 Մանեմք ի գուռն ուրախութեան ,  
 Որ պատրաստեալ է սիրելեաց :

— ո —

### ԴԻՔԱԶՆ ԿԱՐԻՆԷԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գուժը հնչեց Մըշու աշխարհ ,  
 Թէ ահա գայ Լէնկթիմուր Խան ,  
 Աշխարհաւեր այն բռնաւոր ,  
 Որ արեւէն մինչ արեմուտք  
 Քալեց չափեց իւր կաղ սարով :  
 Լըսեց Սամոյ մեծ Ամիրէն ,  
 Զարհուրեցաւ նա երկիւզէն ,  
 Հընարամիտ այս բռնաւոր  
 Սասանայէն ուսու իւր գաս .  
 Վաշ , վաշ կարգաց , Հըպարտացաւ ,  
 Սաոց . զըտի հընար և ճար :

Մըշոյ երկիր ողջ ժազովուրդ  
 Հանեմ , վարեմ ևս ի Սասուն ,  
 Այդ շէն աշխարհ թողում թափուր ,  
 Ոչ մորդ մինայ , ոչ չուն , կատու :

երբ լէնկթիմուր գայ մեր տչխորհ ,  
 Յեսոյ երկիրն ամայացած ,  
 Դեղ ու քաղաք աւեր գարձած ,  
 Եւ շունելով հայ ու ճարակ ,  
 Յետրս դասնայ ամօթահար :  
 Ասոց այս բան հրաման հանեց ,  
 Յասոյ լերան վայրագ ցեղեր  
 Սև ամպերու պէս կոտակուած ,  
 Կամ մարտիսի նման ժողոված ,  
 Աղջ թափեցան Մըշոյ աշխարհ :  
 Խռ ճապ , տագնապ տիրեց Տարօն  
 Մուշը պատեց թուխալ մըշուշով ,  
 Մէրը մանուկ իւր ուրացաւ ,  
 Փեսէն նոր հարուն մսուացաւ ,  
 Եէն չէն տըներ թողին անտէր ,  
 Փախան , գնացին լեռներ ձորեր :  
 Ո՞վ էր գիւցաղն կին առնացի .  
 Քաջ կարինէն էր Մըշեցի .  
 Թուէր թէ մեռած էր ամուսին ,  
 Անէր մանկիկ մի ութամեայ ,  
 Միակ սրդի իւր սիրական :  
 Անոսհմիկ կին չէր կարինէն ,  
 Մամպունի տան շառատիզ էր .  
 Հասակ հսկայ բարձր ու շըքեղ ,

Աչկաւնք՝ պայծառ ականց փայլէր ,  
 Գէմք իւր ըզդաստ , պատկառելի ,  
 Ունէր բաղոււկ նա կորովի ,  
 Ինչպէս Թաթոււլ վահան գեցն :  
 Զէր հնարամիտ ինչպէս Յուզիթ ,  
 Այլ անվեհեր յայտնի գործէր :  
 Նա մըտածեց խոյս տալ չարէն ,  
 Կապեց մէջքէն հայրենի թուր ,  
 Ժառանդ թողուած ծէր Մուշեղէն ,  
 Կախեց ուսէն պողպատ վահան ,  
 Զինուոր գարձաւ ասպետափառ :  
 Առեց որդին Առուշեղ մանուկ ,  
 Կանչեց Աստուած , ելաւ սովի .  
 Հրեշտակ Թափէլ էր ուղեցոյց  
 Ազատ անվախ երբ նա կերթար ,  
 Ո՞հ , ետեէն չարեր հասան :  
 Նա մի անգամ դաշճաւ ի յետո  
 Գետին փըռեց վատաղզիներ :  
 Այլ երբ ահսաւ հեռաւոտ աշքով  
 Թէ զան բաղում զաղան Քրտեր ,  
 Գոչեց . Ասուամծ իմ , գու գիտե՛ն  
 Թէ մայր եմ հա յոյժ սրդեսէր ,  
 Այլ իմ հաւատ և քո մեծ ոէր  
 Ցաղթահարէ մալինի սէր :

Ես ամ մոռնամ ծնողական գութ  
Եւ մօր սրտի բնական գորով ,  
Զոհեմ որդիս իմ քեզ ձեռօքս =  
Սբրահամու թե բոնեցիր ,  
Որ չի զոհէ միակ որդին .  
Դու մի՛ բաներ թես իմ , ո՞վ Տէր ,  
Ահա չարեր հասին ինձ մօտ ,  
Թող որ զոհեմ մատաղ գառնու կս =  
Մաց քաշեց սուր պատեհէն .  
Մորթեց Մուշեղ խոր ազաւնիկ  
Էնչպէս հաւիկ մի որ զենես  
Նու թե շորժէ և թրթլփայ .  
Այսպէս Մուշեղ մօր սաքին տոկ  
Ո՞չ թրթլփաց և մեռաւ ,  
Թըռաւ հոգին ազաւնիկին ,  
Գնաց խառնեցաւ Ըյո երամին :  
Օ՞չ , ասաց քաջ կարինէն ,  
Ես փրկեցի հոգին հաւատ  
Լըսեր եմ Ես Աւետարան ,  
Հողին է միակ կենդանազար ,  
Մարմին ոչինչ է և ունայն :  
Քաջ կարինէն կատարեց զոհ ,  
Տեսան այս բան այն բարբարասոր  
Զահի հարան և սոսկացին

Մհացին ապուշ իշենց տեղեր =  
Այլ կարինէն նոշ թե առեց ,  
Ալացաւ ի վեր ինչպէս արծուի  
Մի բարձրագոյն քարի դադալ ,  
Որոյ մի կողն էր սովորութ ,  
Մարդ որ նայէր ինելքըն մաղեր .  
Չոքեց կարինէն քարի վէրէն ,  
Աչքեր գարձուց կապուտ երկինք ,  
Խորոց սրտէն հանեց մրմունչ .  
Մի՛ համարիր . Տէր իմ , ոյս մեղք ,  
Թէ որդեսպան է կարինէն :  
Դու զիս զիտես , Տէր որբանակէտ ,  
Հոյւենատուք իմ սուրբ հաւատ  
Ես պահեցի աւաշանէն ,  
Եւ պահեցի պարկեշտութիւն ,  
Որ քո շրհորէն էր և պարզ է :  
Ես յիշում եմ Շամանէնէ մայր ,  
Կին որբանէր , մեծահաւատ ,  
Լօմն որդիս տուաւ ի զոհ ,  
Հասաւատ պահեց քո սուրբ օրէնք =  
Տէր , գու զիտես վոքրէ իմ զոհ ,  
Անհուն մեծ է քո Խաչին Զոհ :  
Տուր զօշովիսն ծառայի քա ,  
Որ նուիրիմ անձն իմ ի զոհ :

Չեմ յուսահատ ևս անձնասպան ,  
Այլ ինքնակամ զոհիմ սիրոյդ .  
Ասաց այս բան բախ կորինէն ,  
Խաշակնքեց պայծառ երես ,  
Այն ահաւոր սարաւանդէն  
Զինքըն ձըգեց վայր ի գետին ,  
Կըսոր կըսոր եղաւ մարմին ,  
Հոգին ողջամբ թըռաւ երկինք .  
Հրեշտակ բացաւ դարստասին դուռ ,  
Եւ կարինէն մըտաւ ի լոյս ,  
Դըտաւ այնտեղ իւր աղաւնեակ ,  
Հոգին հոգւոյն հետ միացաւ ,  
Մայրըն որդւով իւր բերկրեցաւ .  
Օրինակ առէք , Հայոց մայրեր ,  
Որչափ կարդաք իմ այս տողեր .  
Զոր ծըրեր է ծերած չՍթրիլ ,  
Դուք յիշեցէք զերինէն ,  
Ու ի պահել պարկեշտութիւն  
Հաւոտ և կրօն աստուած տոտոր ,  
Այսպէս տուառ անձն ի կորուսա ,  
Դըտաւ երկնեց արքայութիւն .  
Իւր յիշատակն օրհնեա՛լ լինի :

— 10 —

## ԲԵԹԼԷՇԷՄԻ ԾԱՂԻԿ

« Եւ րիխեցի զաւազան յաւ-  
մատոյի Յեսուսի , եւ եղի ծա-  
ղիկ յաւմատյ անտի » :

ԵՍՈՅԻ ԺՈ. 1.

ՄԵծահանդէս տօնի ծննդեան  
Խորենացին է երգահան ,  
Որ զքնար հոգւոյն առեալ  
Թաշի երթայ երուսաղէմ ,  
ԲԵթլէհէմի սուրբ այրին դուռ  
Նոտի , երգէ զՓրկչին ծընունդ :

Եւ զիմ հոգիս , երգիչ սուրբ Հայո ,  
Տար ընդ հոգւոյդ ի Բեթլէհէմ .  
Ես ձայն առնում և գու երգէ  
Քաջահցիւն քո շարական ,  
Զոր քու մատունք բանահիւոէր .  
« Խորհուրդ ՄԵծ և Աքանչելի ,  
Որ յայսմ առոր յայտնեցաւ :

Ու՞մ յայտնեցաւ, զարմանա՞ց բան ,  
 Ո՞չ իմաստնաց աշխարհիս այս ,  
 Այլ հօտարած հովիւներուն :  
 Թողուց Աստուած Երտսազէմ ,  
 Թողուց տաճար Ոողամոնին ,  
 Անշուք այրին մէջ յայտնեցաւ .  
 Թողուց բանդէտ մեծ բաբունիք  
 Աստուածաշունչ գրոց նօտարք ,  
 Հապտ Դըպիքք Փարփռեցիք ,  
 Ո՞ւ պանծային յանձինս իւրեանց ,  
 Եքանչելի և մեծ խորհուրդ  
 Անդէտ հովուացըն ծանուցաւ :  
 Վամն է՞ր այդպէս կամեցաւ Հայր .  
 Լու՞ր , քեզ Պօղոս տայ պատսավան ,  
 Թէ՞ զյիմարս ընտրեաց Աստուած ,  
 Որ իմաստունս ամօթ առնէ ,  
 Աթենական յԱրիսպագին  
 Հովիւ Պօղոս բանախօսեց ,  
 Զիաչի ճռաէն և զիստելուսին ,  
 Զիսին մեռեալ և յառուցեալ .  
 Ենուշն Աստուծոյ երկեցաւ ,  
 Փրկիչ եղե Ազգի մարդկան :  
 Գիտոց կաճուռք Աթենացւոց  
 Ասեն ընդ ծազր և զարմանան :

Զի՞նչ նորալուր բան խօսի մեզ  
 Ակրմանաքազ մըշակբս այս :  
 Եթէ տոեն անհուան միտք ,  
 Հովիւ վրկայք մեզ չ'են յարգի ,  
 Աստուած հանեց տար աշխարհէն իշխանաւոր այն մեծ մողեր ,  
 Որ տեսնեն տոտզ մի յարեելս ,  
 Լուսապայծառ էր իւր ծազումն :  
 Մի տաղասաց բան ստեղծէ .  
 Ի մէջ աստղին տեսայ մի կայր ,  
 Եւ կուսին գիրկ մանուկ Յիսուս :  
 Գուշակելով Փրկչին ծնունդ ,  
 Մոգերն եկան լի հաւատով ,  
 Երկրպագին Փրկչին մերոյ :  
 Լոյս ծագեցաւ Երուսաղէմ ,  
 Ա՞ն , ծածկեցաւ նորու աշքէն .  
 Աղդ հեթանոս տեսաւ հեռուստ ,  
 Երկրպագեց և հաւատոց ,  
 Աղդ հեթանոս վկայ եղե ,  
 Փառուորի Փրկչին ծընունդ :  
 Եսայիսա կանխաձայնէր  
 Յուշ առնեմ քեզ , ծառայ Յակոբ ,  
 Երբ տեսնաս գու Լուսոյն ծազումն ,

Դու բուռլին հար , բանէ՛ բղլոյսն ,  
 Այդ քո փառքն է մի՛ տար այլում ,  
 Որ օտար է և ահծանօթ :  
 Ո՞չ թուլացաւ Յակոբայ ձեռք ,  
 Ազգ հեթանոս բանեց զլոյսն ,  
 Սոսկ փառք մընաց Յակոբայ տան .  
 Ծեր Սիմէօն ի տաճարին  
 Լոյն և գրկին առաց այս բան :  
 Թողլով զկարգ նախաերգոյս ,  
 Արդ ըսկըսիմ զծնունդըն սուրբ ,  
 Ծաղիկ ծաղկեալ Գաւթի սընէն ,  
 Նախասկզբէն պատմել ոճով :  
 Բեթլէհէմէն հեռու մի ժամ  
 Կայ մի տեղի ազօթավայր ,  
 Կանաչուէտ ու ծաղկաղարդ :  
 Ո՞նդ է արդեօք ծաղիկ դաշտաց ,  
 Եւ կամ չքնաղ չուշան հովտաց ,  
 Զոր Առաջնորդ առնու ի յերդ ,  
 Երդ փեսային և իւր հարսին :  
 Ուր ասեն թէ հովիւ Գաւթ  
 Յեսէի տան արածէր հօտն .  
 Եւ ա՛յն օրէն մինչեւ այսօր  
 Տեղն այն կոչի հովուաց անուն ,

Ուր հօտերուն հովիւներուն  
 Մի հանդրուանն է գիշերուն :  
 Անդէտ , արդէտ մեր հովիւներ  
 Երբ ժողովին ի միտոին ,  
 Նատեն , ժղին սարէն ձորէն .  
 Չունին ոչինչ հետ քաղաքին :  
 Երբեմն պարծին իւրաքանչիւր  
 Գամբըռ հուժկու մեծ շըներէն ,  
 Ամանք առնուն վող ու ուղինդ ,  
 Քաջ երաժիշտ են հովիւներ ,  
 Գիտեն խօսիլ հետ հօտերուն .  
 Հրաւէր կարգան եղանակու .  
 Նստել , հանգչիլ ու սրսճալ .  
 Եւ երբ հնչեն մեզմիկ անուշ ,  
 Այդ նրշան է լինել ի քուն :  
 Հովիւն էլ իւր օրօրն ունի ,  
 Խնչուէս մօր երդ օրօրոցին :  
 Հովիւներէն կան պաղպիներ ,  
 Որ սըրատես ճանաչող են ,  
 Հաղար հաղար դառն ու ոչխար  
 Երբ խառնակին իւրարու հետ ,  
 Գառներ մայրել յոյժ բառաչեն .  
 Մայրն զգառնուկ , գառնուկ զմոյր  
 Մոլոր մոլոր սրոնեն ,

Պոպոր հովիւ գիտէ զատել  
Մէն մի դասնուկ տու իւր մաքուն,  
Այս բան հավուին մեծ հովարմ էր,  
Ասեն նաև թէ հովիւներ  
Դեռ չի ծընած դասնուկներէն  
Ուու որոշէլ դիտեն փորձալ,  
Է՞դ է արդեօք, եթէ որձ :

Է՛ երջանիկ, դուք հովիւներ,  
Թողէք սրբինդ և ձեր փողեր,  
Չեղ աւետեաց վաղ տի հնչէ :  
Յանկարծ երկնուց լոյս փայլեցու,  
Դաշտէր լեռներ լուսով լրցան,  
Հօտերն ամեն վրդովեցան,  
Եւ հովիւներ մնացին ապշած,  
Ասին . ի՞նչ է այս հրաշալից բան,  
Կէս գիշե՛ր է, չէ աւաւօտ,  
Արեւն չէ այս պածու լոյս :  
Տեսան հրեշտակ մի լուսուր,  
Չայն աւետեաց հնչէ վերտոտ.  
Աւետիս ձեղ, բարի հովիւք,  
Փրկիչ ծընաւ ձեղ բեթլէհէմ,  
Այս նըշանակ տամ ձեղ ստոյդ,  
Վաղէք դընացէք բեթլէհէմ,  
Մըտէք այն այր, որ դուք դիտէք,

Աւը ափ տեսնաք Փրկիչ Մանուկ  
Խանձարուքին մէջ պատառած,  
Այնպէս գրուած է ի մըսուր :

Հովիւք դարձան հայեցան վեր,  
Տեսան երկնուց գուռին բայտու եր,  
Լուսեղինոց ամբողջ դասեր  
Բանեցին ողջ երկնուց երես.

Աւաւանէին և խաղային  
Եւ երդէին քաղցր ձայնով .

«Փառք ի բարձունս Աստուծոյ» :

Ասեն հովիւք . ի՞նչ է այս բան,  
Զոր Տէրն մեր ցոյց տուաւ մեզ  
Ելէ՛ք երթամք ի ԲԵթլէհէմ ,

Շնորհաւորեմք Փրկչին ծնունդ :

Առէք մեղ հետ մասաւզ դասներ ,

Տանիմք մեր ձօն Փրկչին ծնունդ :

Առէ՛ք սպիտակ փափուկ բուրդեր ,

Տանինք փըռոց շոր մըսուրին .

Մեր գաշտերու ծաղիկներէն

Շուշան ծաղիկ և անթառամ ,

Քաղեցէ՛ք, վունջ վունջ կապէք ,

Տանինք շարենք մարին բոլոր .

Մեր նոր ծաղիկ Մանուկ Փրկչին

Նաղիկներով պըսակ դընեմք :

Մի հովիւ էլ այս բան յիշեց ,  
Ասաց . ամշաւշա Փրկչին ծընողք  
Յոյժ ազքատ են և չքաւոր ,  
Որ իջևան մի չեն դըտեր  
Մեր Բեթլէհէմ քաղաքին մէջ ,  
Եկել գըտել են մեր այրիկ  
Մութ ու մրճոս և յոյժ վոքրիկ ,  
Ես էլ կուղեմ մաքին կըթեմ ,  
Մի պուտուկ կաթ տանեմ տանիմ ,  
Ուտէ ազքատ ծընող մայրիկ ,  
Շուտ շուտ ծիծ տայ մանուկ Փրկչին :

Հովիւք հասան մըտին սուրբ այր ,  
Տեսան իրենց մրճոս մութ այր ,  
Համակ լուսով լուսած էր այն ,  
Եւ լուսոյն մէջ լուսածին մայր :  
Տեսան Փրկիչ խանձարութով  
Պատած , դրուած ի մըտուրին ,  
Մի կողմ իշուկ մի էր կապուած  
Միւս կողմ եղնիկն էր պարարակ ,  
Եւ ի միջի Փրկիչ մանուկ .  
Զոր Ամբակում տեսաւ հոգւով :  
Մեր հովիւներ քաղաքավար ,  
Ոզնոյն , ասին , ով Տիրամայր ,  
Մեր հովիւներս , դաշտի ծառայքս ,

Պորզ , միամիտ շինովան եմք ,  
Ոչ գիր գիտեմք և ոչ կարդալ ,  
Անրան հօտին եմք պահապան ,  
Չեմք ի համար մարդկան դասին ,  
Մարդիկ ըզմեղ կոչեն անրան .  
Միթէ անպէտ մարդ է հովիւ .  
Հովիւն էլ իւր շընորհն ունի ,  
Հայր Աբրահամն ալ մեծ հովիւ էր ,  
Բոլոր որդիքըն Յակովայ  
Հովիւ էին և հօտարած ,  
Օրհնեալ լինի Փրկչին ծընունդ ,  
Հովիւներուս յարդ բարձրացոյց .  
Զի Տէր Աստուած մեր հաճեցաւ ,  
Թողուց քաղաք երուսաղէմ ,  
Թողուց բանդէտ մեծ բարսւնիք ,  
Հովիւներուս յայտնեց իւր փառք :  
Մի լուսափայլ հրեշտակ երկնուց  
Մեղ աւետեց քո սուրբ ծընունդ ,  
Ասաց . գնացէք ի Բեթղէհէմ ,  
Տեսէք Փրկիչ ի մէջ մորին :  
Ահա եկանք տեսանք տշքով ,  
Երկրպագեմք մեք հաւատով  
Մանուկ Փրկչին և ծընող Մօրդ :  
Մեք ուրախ եմք և շատ ուրախ .

Հավիւներուս տհցուք այս այս  
Ասպնջական եղաւ քեզ, Մայր :  
Մեք ի՞նչ ընծայ տամք մեր Փրկչին,  
Չունիմք սոկի և թանդ բաներ,  
Գաշտի վաստակն է մեր ընծան :  
  
Ահա բերենք մեք գառնուկներ  
Մատաղացու հայր Յովսէփին,  
Բերենք փափակ դառանց բուրգեր,  
Փըսոց արա խեղճ Մանկիկիդ,  
Ար գըրեր ես ի մէջ մորին,  
Գեր չոր գետնին և չոչ յարդին :  
  
Դու ձեռահիւս գիտես, Մայրիկ  
Մեր բուրգերէն մանէ՛, հիւսէ՛,  
Անկարանի մի պատմուճան,  
Տաքուկ տաքուկ հագնէ Մանկիկ,  
Մեր ծաղկաբեր հովիսներէն,  
Ծաղիկներու վառնջեր բերենք,  
Դիր ի մասուր խանձարուրին,  
Ծաղիկ ծաղկին քո զարդարանք,  
Բերենք սափոր մի մաքուկաթ,  
Անուշ արա՛ առաստ առաստ :  
Քանի մընաս մեր ալշին հիւր,  
Մենք տի բերենք քեզ կաթ, մածուշ,  
Դու միշտ կաթ տուր երեխային,

Որ շուտ աճի և զօրանայ,  
Եւ մեր Փրկիչ զար դու ծընար,  
Ոզչ աշխարհիս հովիւ լինի :  
Մենք հովիւներու լեռնացի հմք,  
Պարտաւոր եմք հօտեր պահել,  
Գիշեր ցորեկ հոկել հօտին,  
Գուցէ չկարեմք կրկին անդամ,  
Գոլ համբուրել մեր Փրկչին ստք :  
Թոյլ տո՛ւր, ո՞վ Մայր, վերջին անդամ  
Ռոտիմք մորին և համբուրեմք  
Աւրբ խանձարուր մեր Փրկչին :  
Օ՛խ . ի՞նչ անուշ հոտ է բուրտում,  
Մի երկնաբոյ ծաղիկ է Աս,  
Մեր դաշտերուն ծաղիկ չէ այս,  
Մեր ծաղիկներ ծաղկին գարսւն,  
Երբ գայ աշուն թումին թափին,  
Իսկ այս ծաղիկ անժառամ է,  
Հսառով, գունով անհանձ է :  
  
Մհաս բաշով, Մայր երջանիկ  
Աստուած պահէ որդւոյդ արե :

Հարցէ՛ք թէ ի՞նչ արաւ Յովսէփ .  
Հովիւների բերած դառներ,  
Բոլոր մորթեց, մատաղ արեց,  
Բեթլէ՛չէմի կաշտ մանկանին

Երբ լոեցին թէ մատաղ կայ ,  
 Աղջ թափեցան սուրբ այրին դուռ ,  
 Կերան կուշտ , կուշտ գառանց մատաղ :  
     Հարցին . ո՞ւր է Մահուկ Յիսուս .  
 Մենք համբուրեմք նորա սուրբ սոսք ,  
 Որ ի շընորհս իւր ծննդեան  
 Քաղցած մահկատին կերաւ մատաղ :  
 Ենորհակալ ենք , Հայր Յովուէփ ,  
 Աստուած պահէ քո երեխէն .  
 Նա մեծանայ և զօրանայ  
 Իշխան լինի Բեթլէհէմէն :  
     Ես ասու յիշեմ Երուսալէմ ,  
 Չկարեմ մոռնալ Երուսալէմ ,  
 Յիշեմ սուրբ Ծնունդ և Բեթլէհէմ :  
     Ո՛վ միաբանք սուրբ Ստորիմայ ,  
 Զայդ Յակովնանց մեծ աթոռոյն ,  
 Որ ի տօնի սուրբ ծընընդեան ,  
 Երժայք Խմբով ի Բեթլէհէմ ,  
 Տօն կատարէք մեծահանդէս ,  
 Եւ մեծամեծ կաթոսներով  
 Դուք պատրաստէք զհարիսէն .  
 Աղջ ժողովուրդ Բեթլէհէմի  
 Աւեն կուշտ կուշտ զհարիսէն .  
 Դուք յիշեցէք , զիս մի մասնուք .

Փոքրիկ պուտեկիկ մի հարիսայ  
 Տուէք հրեշտակին Ամբակումայ .  
 Առնէ բերէ ի յԱրարատ ,  
 Աւր աքնում է ՀԱՅՈՅ ՀԱՅՐԻԿ .  
 Ես կարօտ եմ և յոյժ կարօտ  
 Բեթլէհէմի հարիսային :  
 Հայր Յովուէփայ մատաղի բան  
 Դուք փախեցէք զհարիսայ ,  
 Պինդ պահեցէք դուք այդ աւանդ .  
 Ի յիշատակ Փրկչի ծննդեան :

Վայրուն մի քեզու առ վայրուն  
Վայրուն ապահով ապահով առ առ  
Վայրուն ապահով ապահով առ առ  
Վայրուն ապահով ապահով առ

## ԷՄ ՈՒԽՏ

## ԹԱԴԵՒ ՎԱՆՈՒՅՑ

Հըսեցակ Հայոց թեհերդուբաց ,  
Եւ թեհերուգ վերէն վիս առ  
Տա՞ր ի յ Սրտակ Թագէին վանք ,  
Ուր վեհագոյն տաճարին մէջ  
Հանդչին ոսկերք Թագէսոփ .  
Եւ մօտ վահուց մի տապարէղ  
Կոյ մի մատուռ փաքրիկ անշուք  
Ուր կոյ տապան հանդսուարան  
Սուրբ նահատակ կուսին Սահնդախտ :

Ես ուխտ ունիմ , ուխտս ի վաղուց  
Ու , չկարեմ կատարել ուխտս ,  
Ես ծերացել եմ , ծերացել ,  
Ես կաշկանդուած են իմ սոտքեր :  
Որ խաչակիր է սուրբ ուխտիւ  
Միթէ կարէ նու կոշկանդիլ

Թէ կաշկանդի մարմին աղկար ,  
Հոգին ու միտք թռչին աղատ :  
Թղթափ'ը , հոգի իմ սիրավառ ,  
Ալացի'ը , իջիր Թագէի վանք ,  
Մըսի'ը ի մոթ անլոյս տաճար ,  
Մի մամ վառէ , որ զու տեսնաս  
ԱՌու է տաճար սուրբ Թագէին ,  
Զորիր ի ծունկ և համբուրէ ,  
ԱՌ քո վասիաղըդ ահձկալից :

Սուրբ տապանէն ձայն մի հնչեց ,  
Ձայն տրտունչ էր իրաւացի  
Եւ սրտառուչ մի գանկատ :  
Հարցոց Թագէն թէ ով ես զու .  
Ասի . ՀԱՅՈՅ ՀԱՅՐԻԿԻ Եմ ես ,  
Եւ ահարժեան կաթուղիկոս  
Համայն աղդին մեր Արամեան ,  
Սուրբ աթոռիդ աթոռակալ :

Ասաց Թագէն թէ , Ասաքեալ  
Աշխարհիս վերայ աթոռ ունի՞ ,  
Աւնիմք միայն աթոռ յերկինս  
Զոր խոստացեր է մեր Փրկիչ .  
Ովկ է հնարեր ոյդ օտար բան ,  
Աթոռ , Աթոռ և մայր Աթոռ  
Վեհագիտու և վեհագիտու ,

Եղմիածին, Եղմիածին,  
 Լուսաւորիչ, Լուսաւորիչ,  
 Իսկ Թագէին համար ոչի՞նչ ։  
 Խաչի երկրէն ելայ եկայ,  
 Ես լոյս բերի Հայաստանին,  
 Ես վարեցի այս կորդ երկիր,  
 Քարոշեցի Սւետարան,  
 Եւ ցանեցի սերմըն բանին,  
 Ուռոգեցի իմ արխինով ։  
 Աստուած հանեց Գրիգոր մըշակ  
 Որ աճեցոյց իմ ցանած սերմ,  
 Աւազ, ես արդ անոն չունիմ,  
 Զիս մոռացել է Հայոց ազդ ։  
 Եղմիածին շեն ու պայծառ,  
 Թագէի վանք աւեր գարձել,  
 Ո՛չ շինարար, ո՛չ վանահայր,  
 Ո՛չ ժամ տառզ, ո՛չ պատարագ,  
 Ո՛չ միաբան տօնակատար ։  
 Եղմիածին ջահեր վառին,  
 Իսկ իմ տաճար ճրանդ չունի,  
 Գեղեղմանիս կանթեղ շինած,  
 Զիադ լուսարար, որ վառէ զայն,  
 Տես վեհ տաճար զոր կանդնել ևն  
 Այն մեծագործ նախնի սուրբ հարք,

Այս յիշատակ անտէր մեացել  
 Եւ աղաւնիք բայն են դըմել.  
 Եթէ մընայ այսպէս անտէր,  
 Ո՞հ, ափ կորչի իմ յիշատակ ։  
 Գընա՛, ո՞վ գու ՀԱՅՐՈՅ ՀԱՅՐԻԿ,  
 Տար իմ տրտուհն Հայոց աղդին,  
 Պատմէ՛ ինչ որ աշքավ տեսար  
 Իմ Թագէի վանաց վիճակ ։  
 Համբուրեցի սուրբ գերեզման  
 Ելոյ լոլով ի տաճարէն,  
 Գնացի մըտոյ վոքրիկ մատուռ  
 Սուրբ նահատակ կուսին Սանդուխտ  
 Որ ի միջի վըկայուհեաց  
 Նու առաջին կոյս վըկայն է,  
 Զոր Սանտարբուկ այն ահաւոր  
 Շզիմայսկապ մատնեց ի բանա ։  
 Ասեն թէ մի պատեհ ժամու  
 Գնացել Թագէն Սանիկին այց,  
 Համբուրել է Համբուրել  
 Կոսին շղթայն սուրբ շնթունքով,  
 Խըստիուսել իւր Սանդուխտ կոյս  
 Աւետել է հարսնաւթեան օր ։  
 Ես հարսնուէր եմ վիետյին  
 Բու վիետյին է խաչեալ Փրկիչ,

Առադաստն է լուսոյ երկինք ,  
Զօրացի՞ր գու հաւատով ,  
Թող քո մարմին շղթայն պնդէ ,  
Հոգիդ ազատ վերաթեէ ,  
Երթայ խառնի լոյս երամին :  
Թագէն շղթայն համբուրեց  
Եւ ինձ մընաց կուսին տապան .  
Ես գրկեցի այն սուրբ շիրիմ ,  
Գլուխը գըրի քարի վէրէն ,  
Հոմեռուրեցի լի անձկանօք :

Ասի . Հրե՛շտակ , ուխտո իմ լըցան ,  
Գործո՛ , տա՛ր զիս գու Արարտու ,  
Աւխոեմ չմոռնալ մինչեւ ի մահ  
Սուրբ թագէին այս յիշատակ :

— ՞ ՞ ՞ —

## ՄՐՄՈՒՆՁՔ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

Ա. ՔԱԶՆ ՎԱՐԴԱՆ ԵԽ ՆԻԳԱԿԱԿՅՑՍ ԻՓ  
Ի ՅԻՇԱՏԱԿ ՅՈՒԲ Ա. ՆԱՀԱՏԱԿԱՅՑ

— ՞ ՞ ՞ —

Հոգի տատուածավառ Քրիստոսազօր բանակին  
Քաշապանծ զօրավար ,  
Նոր Մակաբէ , Յուդա , խրախուսիչ մարտագիր ,  
Յաղթող ի կեանս և ի մահ .  
Բնդգէմ պարուկադինին դիմագրաւ շահատակ ,  
Առ ի սէր սուրբ Կրօնին և հայրենի ազատութեան ,  
Ա՛զ մեծի սիրոյդ , չինայեցեր զանձնոդ .  
Գու մեռար , յարեամ Հայտատան ,  
Ա՛ Մամիկոնեան Վարդան :

Խաչուէն զինուոր գու , աշտանակեալ ի ձի սպիտակ  
Ա՛ւր երթառ այլգոլէս բշտակ .

Ես քաջին վարդանայ համհարզ նիւղակալիցն եմ ,  
Երթում հասանիմ յԱլտաշու գաշտ .  
Խեթիչ եղջերբ Խաչին խորտակեմ ես անդ  
Սեաւ աջծից երամու .  
Գընա՛ , գընա՛ , սուր քո առ թշնամիս . . . .  
Ո՞վ Խոռվառանիդ Խուժէն :

Երկնաձիր իմաստութեամբ զդ օնացեալ ,  
Հողի՛ սիրտվառ .  
Դէմ հրապաշտ Պարսկին իմաստութեամբ  
մղեր դու մարտ .  
Ետուր զքեզ ի զօհ , թողեր այս աշխարհ  
Երկնքն է քո վարձք .  
Մեծ իմաստութեամբ էր այս քո սուր և առ ,  
Ո՞վ իմաստունք Հըմոյեալ :

Տիրակերտ մայր Սիօնին Այրարտառայ  
վէմ ընտրելադ սյն ,  
Հատեալ ի Մասեաց սարէն՝ զըրեցար  
մինչեւ ի յԱլտաղ ,  
Հարեր , կործանեցեր զատրուշանս  
մադակօն դենին .  
Բարձրացաւ Խաչին փառք , կար ի գլուխ եղի

Սասան թշնամին .  
Ո՞վ , զարմանալով Տաճառ :  
Խոկ այն ո՞վ է , որ հեծեալ ի սեաւ ցոժոյդ  
իւր օդապաշիկ  
Աշխանք իւր հուր ցայտեն , ո՞չ ձախ հայի  
և ոչ յաջ ,  
Գնայ ի մարտ յօժարասիրտ .  
Գտ գիտէ սուրբ է հայրենիք , մեռանիլ  
վասրն նարտ  
Է սեպուհ պարտիք .  
Գընա՛ շուտ , գընա՛ շուտ , սիրեմ զհոդիդ ,  
Այդ սւխտ սուրբ է .  
Տուր արեդ և կեանքդ զոր ետ քեզ հայրենիք ,  
Այդպէս մեռանիլ անոմահութիւն է ,  
Զոր չգիտեն աշխարհիս անզգում մարզիկ .  
Ո՞վ Պալունիդ Արտակ :

Քաջրերունեան աշխարհի քաջակերունդ ջառաւիդ  
վեհ քաջամարտէկ ,  
Մեռանիմ այդ սօսատիսդ հասակիդ ,  
Ար ամբարձեր է զզլուխդ դէմ յերկինս .  
Աստուած զքեզ սւածացոյց . տուր մի՛ ինայիւ  
ոյդ հասակ և կեռնք

Վասն Եկեղեցւոյ և Աղդին ,  
Յանի՛ր այդ պատրաստ սերմ , սռոգեա՞ ,  
կարմիր արեամբ ,  
Որ բուսանի շուշան գեղեցիկ ,  
Ո՞հ հրաշակերտ ներսէն :

Մանուկ հրեշտակատիւլ գեղանի զուարթածաղիկ  
ի Գնունի բուրսաստանէն .  
Սասուած զքել տնկեաց , կոյլ Յաղկերտ խրէնաց .  
Դու գեռ կանաչարե և կենդանի կաս .  
Ո՞հ , ի՞նչ մատաղ զոհ վասն հայրենեաց  
Մատեար կամակար :  
Սուրբ Գրիգորի հօր նոր Սահակ սիրանունդ  
Զերթ գառնուկ զենար ,  
Ո՞վ նազելիդ Վահան :

Սիրտ ի սուբր նախանձ զինավառեալ ի վրէժ  
Վասն հաւատոյ և հայրենի երկրին .  
Մաեր յԱւարայի դաշտ , աւար հարեր ,  
սատակեցեր  
Խաւարին Արմեգայ զօրդիս .  
Որ կամէր վասել զատրուշան , շիջուցանել  
սուրբ Գրիգորի

Լուսափայլ ճըրագ .  
Քո արիւն շիջոյց Ատրուշանս . Հուսաւորեաց  
Հայաստանին ջահ .  
Ո՞վ ցանկալիդ Արակէն :

Անդ՝ յատեան Յաղկերտին , ասո՞յ յԱրտազու  
գաշտին ,  
Երան , ի պատասխան , ի զէն միշտ յառաջադէմ  
Բոցավա՞ռ սիրահար առ անբիծ կրօն , առ Յիսուս ,  
Եւ հայրենեաց աղտոտթիւն .  
Երկու սիրային հարազատօքդ , խաղաղատեալ  
զիրեարս  
Ննջեցիք քաղցր ի քուն .  
Անմյշ է այդ քուն , թող հանդշին պահ մի

Քո վաստակեալ բազուկը .  
Ճիրմիդ մահարձան են , գլույդ հսկանի սփոքն  
Շաւարշանայ ծաղկունք ,  
Ո՞վ , յառաջադէմ Գարեգին :

Յարքայական տանէն աղատ Աստանիկը ,  
Երկու սիրաթե Արծուիք ,  
Յ'Աստանայ սորէն սաւառնեալ արտգապէս հասիք  
Մինչև յԱւարայր .

Յ' ի՞նչ արդեօք , սրոկի առնել անդ անսուրբ  
կենդանիս  
Խաւաշածնունդ Զրուանայ սրգիս .  
Կարթաձեա մագլօք ձիւ ձիւ առնելով  
Սեաւ աղասուց զերամս .  
Քաջ քոջ կռուեցայք , հարիք և հաշայք ,  
Հուսկ ուրեմն անկայք .  
Ո՛չ . այլ կենդանի էք , և գեռ կանդուն կայք  
Ի ոէք Հայկազեանց ,  
Ո՛չ մեծ տապետք Արծրունիք ,  
Վահան և Սահակ :

Պարծի՛ք , ով Գրիգորէ , բարձրացի՛ք ,  
ահա քո գառինք  
Քաջապէս մարտուցեալ ընդ արացող գայլս ,  
Թաթաւեցան յարեան ճապազիս .  
Յերկնուստ այտի տե՛ս ահաւասիկ թեաբուսեալք ,  
Ազաւներամ թռուցեալ յերկրէ գան տու քեզ .  
Բնդարձակե՛տ զգողդ , տուր հանդիստ դոցա ,  
Վաստակեալ են քո սրգիք .  
Թուե՛ա դու մի՛ մի՛ , հազար երեսուն  
Զորս ընծայէ երկնից , քո ծընեալ եկեղեցին :

Գուռ , Աստուած Գյղիգորի . Աստուած  
ներսէսի , Աստուած Սահակայ ,  
Աստուած մեր սուրբ հարց .  
Ահա քեզ զո՞ւ բոլորանուէր , քեզ պատարագ  
Հաճոյական ,  
Քեզ այսպիսի նահատակաց սուրբ արխոն ընծայ .  
Ընկա՛լ , Տէ՛ք , յիշե՛տ , Տէ՛ք , Գրթա՛ , Տէ՛ք ,  
և ա՛յց տրա  
Տառապեա՛լ հայրենեաց սրբոյն Վարդանայ ,

## ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱՌ ՔԱԶՆ ՎԱՐԴԱՆ ԵՒ ՆԻՉԱԿԱԿԻՑՍ ԻՒՐ  
ՅԻՇԱԾԱԿ ՏԾՈՒՄ ՆԱՀԱՏՈՒԹԵԱՆ ՆԱՑԻՆ

ի՞նչո՞ն Մամկունի քաջոց աշխարհին  
Յ' Աշտիշատու մայր Եկեղեցւոյ խորանին առաջ ,  
Ո՞վ է գիւցալն այն սպառազէն ,  
Որ Սահակայ պապուն խաչքարին հանդէպ  
Պալատի հոգեհառաւ .  
« Ես , ասէ , թօռնիկն եմ քո կարմիր Վարդան ,  
Գոտեորեալ երթամ յԱրտաշատ .  
Երթամ զանձն տալ վասն Եկեղեցւոյ  
Վասն հայրենեաց աղատութեան .  
Ահա ձեռն գընեմ ուխտեմ ի Խաչ և յԱւետարան ,  
Ո՞վ սուրբ հայրապետ , յԵրկինս մօտ ես ,  
Հոգւով աղերս ած  
Առ պետականն Աստուած .  
Եւ տու՛ր ինձ զօրավիկ սատար  
Քո օրհնազէն բարձր աջ » :

— « Ես խոռվեալ եմ , որտամնաց մեռայ ,  
Դառնացեալ եմ յոյժ առ Հայոց աշխարհ ,  
Առ անընաբուլ և ախրագրուժ նախարարս ,  
Որ զժագն Արշակունի վառաց թողին ,  
Ո՞չ սորկացան լիդ իշխանութեամբ Պարսիկ  
Մարզպանաց :  
Եյլ հաշտ եմ ընդ քեզ , իմ աղատասէր ճետ ,  
Զայն իմ կարկառեալ ի ախրադին տապանէս  
Զքեզ օրհնեմ , ո՞վ հայրենասէր զօրավար ,  
Երկնից զօրութիւն հասցէ քեզ աշագ ,  
Սուր քո հասցէ զմշնամիս չարաչար ,  
Յաղթական բարձրացիս թէ՛ ի կեանս թէ՛ ի մահ .  
Երթ ողջամբ , որդեակ իմ  
Քաջապահ՝ կարդան :

Զինակիրք իմ , ածէք զզէնս , զզ Եցուցէք զրահ ,  
Բերէք սազաւարտ , կոչէ զիս Վարդան .  
Ես նորա քաջ նիվակակիցն եմ .  
Ո՞չ , չմեկնիմ ի նոցանէ , ո՞չ ի կեանս , ո՞չ ի մահ .  
Երթամ լիդ նմա ողահել սուրբ Կրօն  
Պաշտպանել սուրբ Հաւատաք , կանդնել Խաչին փոռք  
Երթամ պատուել զԱւետարան ,  
Պատառել Յաղկերտին մահաշունչ հրովարտակ ,  
Որ սպառնաց շիջուցանել Յիսուսի

Սիրոյն հուր , և վտաել Որմղաց կը բակ :  
Գն'ա , գն'ա , այդ տիստ նուիրական է .  
Կրօնք , Հաւատք , Խաչ , Աւետարան  
Քեզ լիցին օդնական

Ո՞վ Խոսխոսունիդ Խորէն :

Երեսքն զլոյտ արտափայլեն ,  
Գոդ թէ ի Թափօքէն իջեալ  
Երթայ յԱւարայրի Գոզգովծոյն ,  
Յիսուսի հետեւով չ'զնէ միտ Պետրոսին .  
Խոյտ տալ ի խաչէն , լուին կալ յանհապատ .  
Տեսէք ո՞րչափ ինքնայօժար ,  
Որչափ հրճուանօք հոդեվառեալ  
Վաղէ երթայ ի պատերազմ .  
Սիրելիք , ընտանիք , բարեկամք  
Զայտ ամեն մսուանայ . չհամարին ինչ յաշո .  
Չափեցէք , երկինք , զվարձ դորո  
Եւ տուք զարժանին պասկ .  
Պայծառացի՞ր ,

Ո՞ Պալունիդ Արտակ :

Նոր Զարմայլին է այն ի Տուղա՞յ երթայ ,  
Թէ ի յԱւարայր ,  
Հեծեալ ի նժոյդ իւր ճերմակ ,

Այնպէս մըրրրկալից որտառյ , անցանէ  
Զերթ յամպոց փայլակով կայծակ  
Հուր հարեալ մաշէ զանտառ Մատեան զնդին  
Ի մոխիր դասնայ անմահ կարծեցեալ բանակ .  
Այլ ոզբամ զքեզ , քաջ շահատակ ,  
Վաս Պարսկին սուր զքեզ ասպասոտ արկ ,  
Եւ ո՛չ Ա. քիւլէսին նիզակ .  
Առէ՞ք զսկի գորտ , լուսաթի հրեշտակք ,  
Տարէք կանգնեցէք յերկինից վեհ սաճար .  
Մեսաւ Յազկերտ , կորեաւ Մատեան զունդ ,  
Այլ քո յիշտառակ և հոդիզ անմահ կայ ,  
Ո՞ զարմանալի՞դ Տաճատ :

Ելէ՞ք և տեսէ՞ք , սուրք Պրիդորի որդիք ,  
Ո՞ւր երթայ , յառաջ մըզի անժոյժ  
Զիաւըրն այն խաչաղբօշ ,  
Այնպէս արքեալ է Խաչելոյն սիրով ,  
Ո՛չ երքէք զգայ զօրահատ մահուն .  
Դա հանձարեզ է , դիտէ կըսել քաջ  
Թէ մեսանել վասն հաւատոյ՝  
Կեանք է և անմահութիւն .  
Բարէ՞ , այսպէս հաւատաց , չարտք երես մահուն ,  
Չաշխարհ և զանձն ետ , գնեաց զկեանու լաւագոյն  
Ո՞ իմաստունն Հրմայեակ :

Հապա ո՞վ է այն գեղապատշաճ  
Հրացոլակ սպայն ,  
Որ յարձակեալ յերկուս ճեղքէ  
Զ'Արեաց դնդին կուռ ճակատ ,  
Մուշխն նիւստալաւուրա մանչէ ,  
Զայն ասյ յառաջ ածել փղաց զերտամակո  
Ուր անդիմադարձ խիղախէ դիւցաղնաբար .  
Հուսկ ուրեմն անկանի հուսակն այն սօսաբարձր ,  
Զաշխմունս կափուցանէ , հոգին վերաթեւէ ,  
Զ'Աստուած տեսանէ ,  
Եւ ի մահուն կանդինի յազմական .  
Վա՛ իմ հրաշակերտ ներսէն :

Յո՛ւշ , յո՛ւշ , Հայոց մանկունք ,  
Յառեցէք զաջըս ձեր յայն Գնունի մահունին .  
Դա զինեհարեալ է , չդիտէ թէ ո՞ւր երթայ ,  
ի հարսանիս թէ ի կոչ մահուն .  
Ոսէ . ես երթամ յԱւարայր ,  
Երթամ յարիւնակոխ հնձան ,  
Երթամ ճմլիլ անդ վերթ ողկոյզ Յիսուսի որթոյն .  
Սյդէս յապաժոյժ ճմլեցար ,  
Մահուկ գու , մանկական գեղովդ ,  
Սպիտակ և անբիծ ձորձովդ .  
Այլ զի՞ չքհալ , զի՞ վայելուչ կարմրացար ողջամի

Արտէս որդան բանդագոյն ,  
Ո՞հ , ի մէջ շուշան ծաղկանց  
Թուի թէ ննջես ի քուն .  
Զայն տամար քեզ մտառուակ Գնունի ,  
Թափեա՛ զդինիդ ի քէն , Յիսուս կոչէ զքեզ ,  
Զարթի՛ր , զարթի՛ր  
Զքեզ հրեշտակը տանեն յերկինս ,  
Ո՞վ փարելիդ Վահան :

Հաւատաք , Հայրենիք , Երկինք  
Զքեզ վասեցին սուրբ նախանձով ,  
Հոգի արդար և զգօն .  
Արդեօք Յիսուսի հու՞րն էր այն  
Զոր արկ նա ի քեզ , և գու ողջամի կիզար ի զո՞հ  
Յորդահոս թափեցիր զարիւնդ  
Շիջուցեր զմոլենախանձ բոց  
Ամբարիշտ դինին մոգակրօն ,  
Որ խանձել լափել կամէր  
Զ'Եկեզեցոյ նոր դրախտ ,  
Եւ սուրբ Գրիգորի հօր

Մշակեալ ճեռատունկ .  
Այլ քո արիւն չիլոյց ատրաւանին հուր ,  
Քանդեաց մոխրապաշտին տուն ,  
Պայծառացոյց սուրբ հաւատոյ Լոյս ,

և դու յաստեղս վերտափայլեցար  
Ո՞ւ, ցանկալի՞դ Ալոէն :

Բառանիկ Պայազատք,  
Կապել զձեղ ի մի լինդ խմբին առաքինեաց .  
Զ' Ձեղ սուրբն եղիշէ թուեաց և գրեաց .  
Զդիտեմ ո՞ր սիսերիս ձեռն եղծելով ջնջեաց  
Զանուան ձերոյ քաջափոյլ յիշատակ .  
Ցէծացէք, հոգիք, Երկինք զձեղ դիտէ  
Եւ ես յերդ անմահ դրոշմեմ յայս արձան :  
Որ յԱրտօսայ սարին դադ աժէն գէտակն կալեալ  
Յարծուաթե հասիք ի յԱրտօնզ,  
Խաչառուր մագլօք հարեալ իրլեցիք  
Կոյք Յագկերտի մի զակն .  
Անդ երդուայք մահուամբ շիջանիլ ,  
Զի վառ մնացէ Հայոց տաճարին ջահ  
Եւ Աւետարանին աշխարհալոյս ճրուդ .  
Ո՞ւ Արծրունի ասպետք  
Վահան և Ստհակ :

Օ՞ն, զարժացէք, ո՞վ է այն,  
Որ զմինն ի յաջ և զմիւնն ի ձախ թհն առեալ  
Ո՞չ, բաւ չէ ինքն միայն  
Զերկուո ևս ոյլ զոհ իմիտախն տանի  
Մեթաքան մեանիլ երթայ ոգեյուար :

Զո՞յն տուք, Վարդան յետուստէ .  
Ո՞ւրայդպէս ճեպընթաց լինիանվախ դիմապրատ .  
Միթէ կարծէ՞ ինքն թէ անդրէն երթայ  
Ճառել զիսէն ի Պարուց առեան :  
Ո՞չ, ո՞չ, մի՛ այնպէս կարծէք,  
Ես անդիտակ չեմ և դեռ դիշեր չէ .  
Դիտեմ սոսոյդ թէ ի լոյս գրնամ .  
Ես յառաջապէմ Գարեգին եմ,  
Վազ մեռանիլ կամիմ ,  
Եւ վասն իմ Խաչելոյն կառիմ լինդ աշխարհ .  
Ես երկնից սիրահար եմ, երթամ առ սէրնիմ,  
Աղջ կացցես, Հայրենիք,  
Աղջամի կացջիք, սիրելիք .  
Զիս և զեզբայս մի՛ ողբայք .  
Որբացեալ առ ւն Սրուանձտեան :  
Բարապան հրեշտակք բացէք զեռւան երկնից,  
Պատրաստեցէք զերիս պսակս .  
Ո՞չ, երկու հարազատօք  
Անկա՞ Գարեգին, մեռաւ Գարեգին,  
Թուաւ ի վեր հոգեակն :

Ամենակալ մեծանուն Տէր, Մասուած  
մեր սուրբ Հարց  
Աստուած ներով, գրիմած ,

Ահա քեզ պատարագ  
Վերջնծայէ Հայոց աշխարհ ,  
Հաղար երեսուն և վեց զոհ  
Նուիրական սուրբ ողջակիլաց .  
Քեզ համոյ լիցի , Տէր , որպէս երբեմն առ նոյն  
ի գլուխ անդ Մասեաց .  
Տէ՛ս թէ քանի՛ հստ անոյշէ  
Նուխ զսից սուրբ Գրիգորի ,  
Որ բուրէ առ քեզ յԱլտաղու բարձանց :  
Տէր , հայր մեր , ուր է օրն այն  
Յոր ներէիր մեզ , որպէս Յակովբայ տան .  
Յոյց և այժմ սիրոյդ ծիածան  
Կամար ած ի վերայ Հայոց լերանց .  
Ասա՛ , Տէր գթած , թէ այլ ևս հաշտեալ եմ ընդ քեզ  
Ո՞վ առապեալըդ հայտառան :

Ո՞վ ես զու , նոր Եղիազար քաջափառ ,  
Հոգի նախանձաւոր և հանդիսագիր ,  
Զիսչն ի յուսդ առեալ , զԱւետարան ի գիրկդ ,  
Վազես երթառ վկայել վասն Յիսուսի .  
Քեզ ոչինչ փոյթէ թողուլ զպատարագն ի սեղան  
Թողուլ զերեխայն յաւազանին մկրտարան ,  
Թողուլ զհարսն ի քոզ և փեսայն ի սպակ .  
Ո՞չ միթէ զոյդ եհաս քեզ ի Վանանդ ,  
Թէ մախրապաշտ Մոդք հասին մրտին ի Հայտառան .  
Յաղկերտ հրամայէ , քակի՞ն եկեղեցիք ,  
շինի՞ն Ատրուշանք .  
Ելցէ՛ Յիսուս ի տաճարէն , մոցէ՛ Արմիզդ  
ընդ Սատան .  
Օ՞ն , զինուո՞ր դու զօրավարին նաղովրեցւոյ ,  
Կրօն , Հաւատ և Եկեղեցի կոչէ զքեզ ի մարտ .  
Գընա՛ , վկայէ՛ և մեսի՞ր ,  
Ո՞վ սուրբ Գեղնդէ :

Մեծին Գրիգորի տան և գաճին ժառանդ ,  
Սուրբ Հայրապետալու Յովսէփի ,  
Լուր , ի Վայոց ձորէն հնչէ վայ ի Հայաստան .  
Ել , հա՞ր զ'զանդակ սուրբ տաճարին Եղմիածնի ,  
Ա՛ռ զգրիչ քո շոյտ գրեա՛ զկնդակ .  
Տուր Հըրաւէր Հայոց հօտին և հովուաց ,  
Աշխարհախումբ լինել յԱրաշատ .  
Անդ կերել նոր ուխտ միւսի եւան ,  
Անարատ պահել զհայրենի հուտատ .  
Կոտել վասն կրօնի և վասն Եկեղեցւոյ  
աղատութեան .  
Թո՞ղ մեռցեն հավիւք ընդ հօտին , և հարք  
ընդ որդիս ,  
Թո՞ղ ի զոհ երթան վասն Եկեղեցւոյ  
Յովսէփի եւր ընկերօք , Վարդան իւր նիզակակցօք  
Թէ բառնի կրօն և Հաւատ  
Զի՞ այնուհետեւ մեղ կետն.ք և աշխարհ :

Էւըշտուհեաց հսկող հօտապետ Սահակ ,  
Յ Արտօսայ բարձրասար գիտանցէն  
Հայի՞ս ընդ գագաթ Մասեաց Միդապատ .  
Տե՞ս , զի՞րդ ի Կատակիւակն ծովէն  
Հովմավար գան սեւ ամպսց երամք ,  
Գան խոնին բարդին յԱյրաբատ և յԱրտակ .

Զրադաշտ զայրագին գոռայ թափել կարկառ  
սպատկահար .  
Փշել զորթատունկո Գրիգորի , քանդել սուրբ  
օդինաց ցանկ .  
Ե՞լ այտի , հասի՞ր յԱրաշատ ,  
Դեմնդ , Յովսէփի և համայն ուխտ Եկեղեցւոյ  
Քեղ սպատեն անդ , զի լիցիս գունոց թարգման ,  
Տեսցուք զի՞նչ խօսի մուշեկոն Պարսիկ ,  
Թէ ասէ՝ թողէ՛ք զ Յիսուսի Աւետուրան  
Եւ մեր հարց սրբազն հուտատ ,  
Հոգի անվեհեր , տուր անդէն քաջ քաջայ ու  
պատասխան ,  
Ասա՛ համարձակ . թէ հայք մեռանին արդան  
Եւ չթողուն հայրենի սուրբ ուխտդ :  
Մուշէ՛ , Արշէն , և Սամսւէլ ,  
Բաշագօտի երիցունք և պաշտօնեայք  
Աւետուրանին ,  
Հաւատար մրցողք յասպարէղ նահատակութեան ,  
Ընդ Յովսենիայ , Սահակայ և Դեմնդ .  
Ո՞վ շինական հօտարած վոքրիկ հովիւք ,  
Եղին զանձինս իւրեանց ի վերայ վոքրիկ հօտին .  
Դուք էք արդեօք այն վոքրիկն ,  
Որ մեծ է յարքայութեան երկնից .

Ո՞ ծառայք ազնիւ ի սակաւուն հաւատարիմ,  
Մըսէ՛ք յուշախութիւն Տեառն ։  
  
 Աբրահամ և Քաջաջ սարկաւագունք ,  
Առէ՛ք զբուրվառ ձեր և լրցէք դհուր .  
Խաչանման արկէք զուրարս՝ զկապանս մահուն .  
Երթամք նախ ի բացօղեայ տաճար  
Աւարայրի մեռելոց դաշտին .  
Ուր կազմին սեղանք զմհից . զինանին  
առւրբ Գրիգորի դառինք .  
Ուր ընդ սուր և ընդ հուր անցեալ  
Աղջակիզին Եկեղեցւոյ որդիք .  
Սարկաւագունք , խունկ ծխեցէք ի հոտ անոյշ  
Շաւարշանայ շիրմաց անմահ մեռելոց .  
Օ՞ն , թողէ՛ք արդ զորդւոց շիրման , երթամք  
յիպար աշխարհ ,  
Օրհնեմք անդ դհարց գերեզման  
Եւ դյիշատակ կատարման նոցա ։  
  
 Զեռս ի վեր կալէք , ձեռս ի վեր , Յովուէփ ,  
Սահակ և Դեռնդ ,  
Երիցունք և սարկաւագունք ,  
Ո՞հ , ծերանալոյ ձեր ժամն եհաս .  
Ահա՛ կապեն զձեղ ի գօտի մահուն .

Ահա՛ վարեն տանին զձեղ ի Պարսա հեռագոյն ,  
Յերկիւ նժդեհն ի քաղաքն նիւշապուհ .  
Կամար ձեր չէ մարդարտայեռ , այլ շղթայ է  
ծանրակուռ ,  
Ո՞ այց ինձ համբուրել զկապանս ձեր սուրբ .  
Չեօք արձակեցան տղատ որդիք Եկեղեցւոյ .  
Յաղթանակ տորաւ Խաչ , փառաւորեցաւ Յիսուս .  
Ո՞վ սուրբ Դեռնդեանք ։  
  
 Զարտաշտ քն այն Գեհշապահ  
Յանձնէր զձեղ Մոգպետին մալեռանդ ,  
Որ նորին շղթայիւք պըզկեալ  
Գընէր ի դէճ և խաւարաշին բանտ ,  
Մարմին էր ձեր զէն , և կռուելով տոկացիք  
Վշտակրեալ ի դառն կտանիս ,  
Ո՞ւ փշրէր անօթ հոգւոյն ձեր անվլկանդ ,  
Գուք լոյս , ի խաւարի լոյս ծաղեցիք անդ  
Մոգպետին խաւարապատ աշաց .  
Որ ի մահ ննջէր Զրագաշտին ուսմամբ , հրաւ  
շիւք բացան աչք ,  
Ետես զլոյս Յիսուս , և հաւատաց յԱստուած  
Ո՞վ Սուրբ Դեռնդեանք ։  
  
 Անցանէր այս ծաղկալարդ  
Մեծ պասերին օր դայր հասանէր անդ ,

Մերձենայր տակաւ տակաւ Գոզգոթային Խաչ .  
 Պիտոյ էր ձեղ Սիօնի վերնատուն մի զարդարեալ  
 համակ ,  
 Պիտոյ էր ձեղ սուրբ ընթըրեաց սեղան և  
 կենաց բաժակ .  
 Զայդ պատրաստէր չոյտ Մոզպեսն այն  
 հաւատացեալ ,  
 Ենքնին լինէր ձեղ անդ կոչնատէր և հրափիտակ :  
 Զաքէր նըման հայցէր , լոյտ և փրկութիւն  
 տանէր իւր տուն ,  
 Լուանայր զսարս ձեր , զջուրն արկանէր զանձամբ .  
 Մըկտէր և պաշտէր զձեղ իւրե զԱստուծոյ  
 հրեշտակ .  
 Աեղան կազմէր նահապետական , սեղան  
 բարելից և առատ .  
 Ո՞չ , քաղցեալ սովասանջ էին հիւրք զքտուտ-  
 սուն օր իւրանոտ .  
 Յանկանալով կերէք , կշտապինդ կերէք .  
 Ո՞ խաչապարաստ վըկայք .  
 Այդէ ձեր վերջին ընթրիք ,  
 Վերջին երեկոյն և զատկական դառն ,  
 Ո՞վ սուրբ Դեմոդեանք :

Ելէք , գոհացէք և օրհնեցէք զսեղան ,  
 Հասին ձեղ դահիճք անդութ .

Ո՞չ , հանեալ ի զուարիթ սեղանոյդ ,  
 Կրկին կապեալ վարեն զձեղ ընդ առապար  
 առապւտ ,  
 Զոյդ զոյդ լլծեալ անսագսրոյն սպանչաց ,  
 Քարշեն զձեղ անխընայ ընդ քար և ընդ թուփ .  
 Գուռք իւրե այն մըշակին հարօր զերկիր հերկելով  
 Աւզիդ վարէք տանիքք զարքայութեան ակոսն .  
 Երբե ցարենահատք գուռք ցանեալ ցրուիք ,  
 Արակէս առակէ յիւր բան՝ սերմնահան Յիսուս :  
 Անդ ի Խուժաստան ծածկին փշրանք սոկերաց  
 ձերոց ի հող .  
 Աստի ի հայրց աշխարհ բուսանիք ցորեան  
 տոօք և հասկաթուռ .  
 Այսպէս մեռելութիւն ձեր կենդանի և բարդա-  
 ւած արար  
 Զորդիս Եկեղեցւոյ ,  
 Ո՞վ սուրբ Դեմոդեանք :

Դենշտպուհ յոտին կայ սուր ընդ մէջ  
 թերաքտիմ ,  
 Առ նըմին կանդնին դաշիճք դաժանուդէմ  
 մերկասուր պատրաստ ,  
 Կանդնին նաև առ ձեօք երկնահրուէր հոգէա-  
 ւանդ հրեշտակ , հրեշտակք ,  
 Ժամանակ , ո՞չ , զոհին և զինման ,

Կավուցէ՛ք , ո՞վ սուրբք , առ աշխարհ պահ  
մի զաչս ձեր .  
Տեսցո՞ւք զի՞նչ ասնէ Յաղկերս և աշխարհ  
Յետ բառնալոյ աստի զձեր մահկանացու կետնք .  
Ո՞հ , դքեղ նախանուէր դեհուն , Սահակ ,  
զօրաւորդ ի բան .  
Որ լուէ քո ճարտար լեզուն աղաս և թարգման .  
Յաւա՛ջ մատիր ի սուր , Դեսնդ ձայնէ քնդ ,  
Ո՞վ հայրապետ Յովսէփ ,  
Ասէ՛ պատուեմ զքեղ աստ , դու վեհ ես քան զիս .  
Յաւա՛ջ մատիր և դուք , երիցունք և  
սարկաւագունք ,  
Մի՛ վարանիք , տուք զձեր պարանոյ , առէ՛ք  
զանմահութիւն .  
Զմեռանիմ ես Դեսնդ , մնամ ձեղ յետին տրուպ ,  
Մինչեւ մի մի յաւզարկեմ զձեղ առ Յիսուս ,  
Ո՞ իմ խաչակից վըկայք , այդ է իմ սուրբ ուխտ .  
  
Իսկ դու զի՞ առնես , հոգի՛ զօրավիզ ,  
Հոգի՛ հրզօր և մինչ ի մահ անյազիժ .  
Զընկերս քո ամեն ետուր ի սրոյ բերան .  
Միթէ միա՞ց այլես քեղ նոր ինչ կասկած .  
Մատիր և դու ի սուր , կան սպասեն քեղ  
մարտիրոս մշակ .

Խմբովին երթաւ առ ի վարձատուն Յիսուս  
և կալ յանդիման ,  
Ասել համարձակ . Տէ՛ք , վասն հայոց աշխարհ  
հին մեռաք ,  
Ցո՞ւր զվարձ մեր արեան .  
Ասէ՛ք զձեղ պատին անեղծ անթառամ ,  
Ով իմ աղնիւ ծառայք .  
  
Գրիգորէ , Ներսէս և Սահակ  
Ասէ՛ք լիդ ձեղ զթոսնիկն ձեր դկարմիր  
Վարդան .  
Պսակազդ եստ շըքով ելէք ընդ առաջ յաղթա-  
կան առաքինեաց ,  
Ահա դան առ ձեղ Դեսնդեանց հարք , որ լիդ  
որդիս մեռան .  
Ասէ՛ք տարէք յանդիման կացուցէք  
Պետական տիժոսին առաջ .  
Տուք զաղերսագիր և յիշեցէք զատապեաւ  
Հայսաստան :





Թ Ժ Ա Յ

պարունակած համար ՀՎ  
համարութիւնը և շատ ու եղբար  
պահանջման գույքութիւնը սկզբուն  
մասնաւութիւնը բարձր տակ է գույքութիւնը  
առաջնական գույքութիւնը առաջնական  
պահանջման գույքութիւնը պահանջման  
գույքութիւնը պահանջման գույքութիւնը  
պահանջման գույքութիւնը պահանջման գույքութիւնը  
պահանջման գույքութիւնը պահանջման գույքութիւնը  
պահանջման գույքութիւնը պահանջման գույքութիւնը  
պահանջման գույքութիւնը պահանջման գույքութիւնը  
պահանջման գույքութիւնը պահանջման գույքութիւնը  
պահանջման գույքութիւնը պահանջման գույքութիւնը

20р

ՀՀ Ազգային գրադարան



NL0348395

39975